Մարիամ Պետրոսյան
Մարինե Մանուկյան

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Մեթոդական ուղեցույց



2

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

2–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Կ 000

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ: 2–րդ դասարան: Մեթոդական ուղեցույց / Մ. Պետրոսյան,
Կ 000 Մ. Մանուկյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 68 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–99–060–6

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023
© Հեղինակներ, 2023
© ՀՀ ԿԳՄՄՆ, 2023

Ձեռնարկի մասին

Սույն մեթոդական ձեռնարկը յուրօրինակ ուղենիշ է «Կերպարվեստ-2» առարկան դասավանդողների համար և նպատակ ունի աջակցել նրանց՝ աշխատելու նոր չափորոշչով, ըմբռնելու կրթական դաշտի նոր մարտահրավերները, նպաստելու դասագիրքը հասկանալուն, ճիշտ և արդյունավետ գործադրելուն, սովորողների ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելուն:

Գիտենք՝ դասագրքերին կից մեթոդական ուղեցույցները միշտ էլ պահանջված են եղել, սակայն դրանց դերն ու նշանակությունն, ըստ էության, պարբերաբար փոխվել են, քանի որ փոխվել են նաև դասագրքերին ներկայացվող պահանջները: Օրինակ՝ այսօր ներկայացվող դասագրքերն իրենց կառուցվածքով, բովանդակությամբ, նպատակներով և խնդիրներով բխում են նոր չափորոշչից, ուստի, որդեգրել են նոր սկզբունքներ և մոտեցումներ:

Շատ դեպքերում ուսուցիչը դժվարանում է կանխատեսել հեղինակի կամ հեղինակների մտահղացումները, բացահայտել մեթոդական հնարների կամ մոտեցումների՝ նրանց կողմից գործադրման անհրաժեշտությունը: Ձեռնարկն այս առումով միջնորդի դերակատարում ունի, քանի որ օգնում է լուսաբանելու դասագրքի մեթոդական կառուցվածքը, նպաստում դրա կիրարկմանը:

Յուրաքանչյուր ուսուցիչ, որը հարազատ է իր դասավանդած առարկայի գիտական սկզբունքներին, առաջնորդվում է կրթական նորարական գաղափարներով, աշխատանքին մոտենում է ստեղծագործաբար, ձգտում է կատարելագործել իր մասնագիտական որակները՝ ձևավորելով աշխատանքի սեփական ոճ, միանշանակ հաջողում է իր աշխատանքում, եթե օգտվում է դասագրքերին կից ուսումնաօժանդակ նյութերից՝ ուսումնառությունը դարձնելով առավել հետաքրքիր, բազմազան և արդյունավետ:

Մեթոդական ձեռնարկը բաղկացած է վեց թեմատիկ բաժնից, որոնք շաղկապված են օրգանական ընդհանուր կապերով, սակայն յուրաքանչյուր բաժին ունի բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկություններ, որոնք կարևոր են և նպաստում են դասագրքի մեթոդական ապարատի լուսաբանմանը՝ օգնելով ուսուցչին ճիշտ կողմնորոշվել դասագրքում:

1-ին բաժնում ներկայացված է «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչն ու ծրագիրը (1- 2-րդ դասարաններ):

Հարկ է նշել, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:

Հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ինչպես նաև կոգնիտիվ և ստեղծագործական մտածողության անհատական առանձնահատկությունները՝ առարկայական ծրագրերը կառուցված են ոչ թե տարեկան, այլ երկամյա դասընթացների ուսումնառության վերջնարդյունքների հիմքով: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող բովանդակությունը յուրացնել առավել ամբողջական՝ չկաշկանդելով սովորողների ստեղծագործական գործունեությունը, նրան չբերելով պարտադրանքի դաշտ:

2-րդ բաժնում՝ ներկայացված են «Խաչվող հասկացությունները», որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

3-րդ բաժնում՝ «Կերպարվեստ-2» դասագրքի կառուցվածքի, կազմման սկզբունքների ու առանձնահատկություններին վերաբերող տեղեկույթն է:

4-րդ բաժնում՝ «Կերպարվեստ-2» դասագրքի նյութերի թեմատիկ պլանավորումն է զետեղված:

5-րդ բաժնում՝ Դասերի պլանավորման նմուշօրինակներ են:

6-րդ բաժնում՝ Օգտագործված գրականության ցանկն է:

Սույն ուղեցույցը մեթոդական ցուցումների և խորհուրդների մի ամբողջ համալիր է, որը հնարավորություն կտա ուսուցչին ամբողջական պատկերացում կազմել գեղարվեստական կրթության վերաբերյալ՝ դասավանդումը դարձնելով նպատակուղղված և արհեստավարժ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐ

1. Կարողունակություն (կոմպետենցիա) հասկացությունը

Կարողունակությունը անհատի ինտեգրալային, համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:

Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ:



Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է (գծապատկեր 1), և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները:

Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Վերջինիս ձևավորումն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ նշված որակներն անընդհատ կարող են կատարելագործվել: Դրանց ձևավորումը սկսում է դպրոցից և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Միջնակարգ կրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն.
2) սովորել սովորելու կարողունակություն.
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն.
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն.
5) թվային և մեդիա կարողունակություն.
6) մշակութային կարողունակություն.
7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն.
8) տնտեսական կարողունակություն.

Յուրաքանչյուր առանցքային կարողունակություն, որպես կանոն, կարող է գերակա լինել դասավանդող այս կամ այն առարկայում, ինչպես օրինակ՝ «Կերպարվեստ» առարկայում մշակութային կարողունակությունը: Սակայն բոլոր կարողունակություններն մի ամբողջական համակարգ են՝ միջառարկայական և ինտեգրված կապերով:

Հանրակրթական պետական չափորոշչում մշակութային կարողունակությունը ներկայացվում է հետևյալ կերպ՝

- Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ:
- Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն:
- Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում:
- Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

(ՀՊՉ 2021, (II, 3-րդ կետ) https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Մշակութային կարողունակության նկարագրիչներն են՝

Գիտելիք՝

- ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր,
- տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթում,
- ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթում:
- տարբեր ժամանակաշրջանների հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապակցվածություն,
- տարբեր կրոնական ավանդույթներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները,
- տարբեր մշակույթներ, մասնավորապես՝ արժեքներ, սովորույթներ և հմտություններ, որոնք հատուկ են այդ մշակույթներին:

Հմտություններ

- արվեստի որոշ տեսակներում կատարել ստեղծագործական աշխատանքներ:
- Արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել սեփական գաղափարները,
- մշակել և իրականացնել մշակութային նախագծեր,
- քննադատաբար անդրադառնալ իր սեփական աշխարհայացքին՝ որպես բազմաթիվ աշխարհայացքներից մեկին,
- քննադատաբար անդրադառնալ, թե ժամանակի ընթացքում ինչպես է գաղափարը զարգացել տարբեր մշակույթներում տարբեր ձևերով,
- հարմարվել տարբեր մշակութային պատկանելիություն ունեցող անձնանց հանդիպելիս և շփվելիս,
- վերլուծել այլ մշակույթներում առկա տարբեր տեսակետներ,
- արտահայտել, հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը:

Դիրքորոշում

- արտահայտել կամ վիճարկել սեփական գաղափարները և արժեքները,
- ցուցաբերել հարգանք և հետաքրքրություն տարբեր մշակույթների նկատմամբ,
- փնտրել ընդհանուր եզրեր իրենից գաղափարապես և արժեքային համակարգով տարբեր մարդկանց հետ քննարկումներ իրականացնելիս,
- արտահայտել հետաքրքրասիրություն այլ հավատալիքների, մեկնաբանությունների և մշակութային այլ կողմնորոշումների ու պատկանելիության նկատմամբ,
- ցուցաբերել տարբեր մշակութային պատկանելիություն ունեցող մարդկանց հետ աշխատելու հետաքրքրություն,
- ողջունել տարբեր արժեքներ, սովորույթներ և վարքագիծ ունեցող մարդկանց հանդիպելու հնարավորությունները,
- Կարևորել իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերել պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում,

Արժեք,

- մշակութային ընկալում և արժևորում,
- արտահայտել այն կարծիքը, որ հասարակության մեջ մշակութային տարբերությունը պետք է դրականորեն արժևորվի և գնահատվի,

- արժևորել միջմշակութային երկխոսությունը,
- ներկայացնել հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում:

Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները

- ճանաչի և պատկերի որոշ երկրաչափական պատկերներ, ունենա պարզ տարածական պատկերացում.
- կառուցի ֆիզիկական և մաթեմատիկական պարզ մոդելներ.
- մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ.
- հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.
- դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, և կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.
- օգտվի պարզ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, աջակցող սարքերից և սարքավորումներից, կարողանա օգտագործել դրանք՝ պահպանելով անվտանգության կանոնները
-) նկարագրի շրջակա աշխարհի օբյեկտները, երևույթները և դրանց փոխադարձ կապերը.
- ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում.
- ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին.
- ճանաչի և հարգի ՀՀ պետական խորհրդանիշները և ներկայացնի պետական և ավանդական տոների հիմնական բովանդակությունը.
- ճանաչի և հոգատար վերաբերմունք ցուցաբերի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների հանդեպ.
- ճանաչի և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրա-վունքները,
- ճանաչի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելիությունը.
- կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ
- արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը
- ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք.
- զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ:

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՈՒ ԾՐԱԳԻՐ

(1- 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԲԱԺԻՆ 1. «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

«Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի «Կերպարվեստ» առարկայի բովանդակային տիրույթն ապահովում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով անձի մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթաց, որն իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ, կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով:

Դասընթացի նպատակն է ժամանակակից 12-ամյա միջնակարգ կրթության շրջանակներում և այլընտրանքային հայեցակարգերով գործող դպրոցների առկայության պայմաններում ապահովել արվեստի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ ուսուցում, Հանրակրթության պետական չափորոշիչով (ՀՊՉ) սահմանված կարողունակություններին համապատասխան՝ ուսումնական միատեսակ վերջնական արդյունք՝ սովորողների՝ ստեղծագործական գաղափարների մշակման, ստեղծագործական գործունեության, դրա մատուցման, արվեստի ստեղծագործություններին գրագետ արձագանքելու և դրանք իմաստավորելու միջոցով:

1. Հանրակրթական դպրոցում կերպարվեստի ուսումնասիրման նպատակները.

1) Զարգացնել երևակայությունը, քննական, ստեղծագործական, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը, նպատակասլացությունը, աշխատասիրությունը, դյուրազգացությունը, հանդուրժողականությունը:
2) Ձևավորել դատողություններ, վերլուծություններ և որոշումներ կայացնելու, անհրաժեշտության դեպքում նաև հակազդելու կարողություններ:
3) Ձևավորել գեղեցիկը և ներդաշնակը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու և արարելու ցանկություն և կարողություն:
4) Ձևավորել ակտիվ ունկնդիր, համերգասրահներ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն և պահանջ:
5) Սովորեցնել գործնականում կիրառել գեղարվեստական գործունեության ընթացքում ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:
6) Ձևավորել ազգային, համամարդկային, սոցիալական, խմբային, անհատական և անձնական խնդիրները ստեղծագործաբար լուծելու կարողություններ:
7) Ձևավորել մշակութային արժեքների պահպանման, բազմացման, փոխանցման գործում սեփական մասնակցությունն ունենալու պահանջմունք:
8) Ստեղծել մշակույթի և արվեստի ոլորտում մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմաններ:
9) Պահպանել և զարգեցնել մշակույթի և արվեստի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթները, համապատասխանեցնել նոր

տնտեսական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չափորոշիչներին:

2. Դասընթացի խնդիրները

1) Ընդլայնել երեխաների աշխարհայացքը:
2) Զարգացնել գեղագիտական և գեղարվեստական ընկալունակությունը:
3) Հաղորդակից դարձնել ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի նմուշներին:
4) Սովորեցնել աշխատել նյութերով:

3. Հիմնական սկզբունքները

1) Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության անհրաժեշտություն բոլոր սովորողների համար:
2) Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության լավագույն ավանդույթների պահպանում և արդիականացում:
3) Յուրաքանչյուր աշակերտի համար մատչելիության և հասանելիության ապահովում:
4) Սովորողների ակտիվ և ազատ ստեղծագործական գործունեության խրախուսում:
5) Դասընթացի ուսումնասիրման ընթացքում «գիտելիքի ձեռքբերում-գործնական կիրառում-արժեքային համակարգի և վերաբերմունքի ձևավորում» շղթայի անքակտելիության ապահովում:

Հանրակրթական դպրոցում «Կերպարվեստ» առարկայի ծրագիրը կառուցված է հիմնական գաղափարների հենքի վրա, պարուրաձև սկզբունքով: Առարկայական ծրագիչն ապահովում է արդյունավետ ներառարկայական և միջառարկայական կապեր՝ նպաստելով սովորողների ընդհանրական աշխարհայացքի ձևավորմանը:

4. Ուսումնական գործունեության ձևերը

1) Արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, երաժշտության ունկնդրում, կերպարվեստի ստեղծագործությունների դիտում: Հանդիպումներ արվեստագետների հետ:
2) Բանավեճեր, քննարկումներ, ինքնավերլուծություն, զրույցներ:
3) Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր, մրցույթներ, հանդեսներ, ցուցադրություններ և ներկայացումներ:
4) Նյութերի, միջոցների և տարբեր մոտեցումների փորձարկումներ:
5) Հետազոտություններ, տարբեր լրատվամիջոցների և տեղեկատվության աղբյուրների ուսումնասիրում:
6) Անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ և նախագծեր:
7) Ներկայացումներ և մոդելավորումներ, գծապատկերների և սխեմաների ստեղծում, ուսուցողական և գեղարվեստական ֆիլմերի դիտումներ, քննարկում:
8) Մասնագիտական եզրույթների, արվեստագիտական բառապաշարի և լեզվի գործածում, գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում:
9) Տեղեկույթ ու փաստարկներ որոնելու նպատակով մեդիագրագիտության հմտությունների կիրառում, համապատասխան տեղեկատվության և ուսումնասիրման նյութի տեղեկացված ընտրություն:

10)Աշխատանքային թերթիկներ և ռուբրիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով, թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ:

ԲԱԺԻՆ 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արվեստը հոգևոր գործունեության առանցքային տարրն է, աշխարհի զգացական-գործնական յուրացման յուրահատուկ տեսակ, որի առաջացումը կապված է մարդկային հասարակության զարգացման հնագույն շրջանների հետ: Արվեստը նաև իրականության գեղագիտական-գեղարվեստական վերարտադրություն է՝ իր բազմաթիվ տեսակներով ու դրսևորումներով: Այն մարդկային կյանքի մշտական ուղեկիցն է, գործունեության արժեքավոր դրսևորումներից մեկը:

Արվեստի միջոցով կարելի է ճանաչել և հասկանալ մարդկության անցած ճանապարհը՝ սկսած նախապատմական ժամանակներից: Զարդանախշի, կենցաղային իրերի, երգվող մեղեդիների, ծիսական պարերի, դրամատիկ պատմությունների տեսքով ձևավորված արվեստը հասել է մինչև մեր օրեր: Դրանք հսկայական տեղեկատվություն են պարունակում, շատ դեպքերում՝ նաև դեռևս չվերծանված:

Կերպարվեստի տարբեր տեսակների դրսևումներն այնքան ներկա են մեր կյանքում, որ դրանց ուսումնասիրությունը կրթության կարևոր բաղադրիչ է հանդիսանում:

Կերպարվեստի դասավանդումն իրականացվում է հայ ազգային մշակույթի հիմքի վրա: Այն նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, նրա մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, վարպետության, ստեղծարարության, կատարողական առանձնահատկություններին միտված ուսումնական գործունեության, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը և կյանքի, շրջապատող աշխարհի, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

«Կերպարվեստ» առարկան ունի մասնագիտական իր եզրույթները, ուսումնասիրման իր շրջանակը, ձևերը և մեթոդները, որոնք ձևավորում են գիտելիքներ և հմտություններ, յուրահատուկ աշխարհընկալում:

Դասընթացները հնարավորություն են տալիս հաղորդակցվելու արվեստին ազգային, ավանդական, ժամանակակից և ձևավորվող նոր ուղղությունների տեսանկյունից՝ արդեն ծանոթ միջոցները, նյութերն ու մոտեցումները կիրառելով ուսումնասիրությունների մեջ: Ժամանակակից մարտահրավերները նոր խնդիրներ են առաջադրում ուսումնական բոլոր բնագավառների համար: «Կերպարվեստ» ուսումնական ծրագիրը կառուցված է «ստեղծագործության» շուրջ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, վերաբերմունքի, արժեքների ձևավորման, զարգացման և կատարելագործման սկզբունքով, երբ սովորողը հանդես է գալիս որպես ստեղծագործող, հանդիսատես և արվեստաբան:

Դասընթացի չափորոշչով սահմանվել են հիմնական գաղափարներ և ենթագաղափարներ, որոնց համապատասխան՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսվել են չափորոշչային պահանջներ կամ վերջնարդյունքներ:

Սահմանված են հետևյալ հիմնական գաղափարներն ու ենթագաղափարները (հասկացությունները).

ՍՏԵՂԾՈՒՄ - Նոր գեղարվեստական գաղափարների և ստեղծագործությունների ձևակերպում, զարգացում և ավարտ: Իրականացվում է՝

1) նյութերի, միջոցների և մոտեցումների, գաղափարների ուսումնասիրման, փորձարկման և հետազոտման,
2) մասնագիտական բառապաշարի ձևավորման,
3) անվտանգ և ապահով գործունեության,

4) արվեստի տվյալ տեսակին բնորոշ տարրերի և սկզբունքների ուսումնասիրման,
5) նորարարության և երևակայության վրա հիմնված ստեղծագործական գործունեության միջոցով:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ - Գեղարվեստական ստեղծագործությունների մեկնաբանություն և ներկայացում: Ընտրվում, կատարվում, խմբավորվում, վերանայվում և ցուցադրվում կամ ներկայացվում են աշխատանքները: Դիտվում, վերլուծվում և մեկնաբանվում են արվեստի ստեղծագործությունները:

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ (ԸՆԿԱԼՈՒՄ) - Արվեստի միջոցով իմաստի արտահայտման/հաղորդման գիտակցում, ընկալում և արժևորում: Լինել ակտիվ հանդիսատես, ընկալել, արձագանքել և գնահատել (գրավոր և բանավոր) իր և մյուսների ստեղծագործությունները:

ԿԱՊԱԿՑՈՒՄ - Գեղարվեստական գաղափարների և աշխատանքների համադրումը անհատական/մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ: Արվեստի ստեղծագործությունների և ստեղծագործական գործունեության համադրումը պատմության տարբեր շրջանների, տեխնոլոգիական տարբեր միջոցների և մոտեցումների, սեփական կենսափորձի և շրջապատող իրականության տեսանկյունից:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ			
ՍՏԵՂԾՈՒՄ	**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**	**ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ**	**ԿԱՊԱԿՑՈՒՄ**
Նոր գեղարվեստական գաղափարների և ստեղծագործությունների ձևակերպում, զարգացում և ավարտ:	Գեղարվեստական ստեղծագործությունների մեկնաբանություն և ներկայացում:	Արվեստի միջոցով իմաստի արտահայտման/հաղորդման ընկալում, գիտակցում և գնահատում:	Գեղարվեստական գաղափարների և աշխատանքների համադրում անհատական/մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ:
Նյութ, միջոց, մոտեցումներ	**Վերանայում և ցուցադրում**	**Քննադատական արձագանք**	**Արվեստ, տեխնոլոգիաներ, գյուտեր**
Տարրեր և սկզբունքներ	**Մեկնաբանում**	**Գնահատում և ինքնագնահատում**	**Արվեստի պատմություն**
Նորարարություն, երևակայություն			**Արվեստի դերը և նշանակությունը**

Յուրաքանչյուր գաղափարի համապատասխան վերջնարդյունքները ձևավորում են սովորողի գնահատման չափանիշը:

ԲԱԺԻՆ 3. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է ուսումնառության և դասավանդման գործընթացների արդյունավետությունը պարզելու և դրանց վրա ներազդելու նպատակով և նպատակաուղղված է չափորոշիչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը և զարգացմանը:

Առաջադիմության գնահատականն արձանագրում է սովորողի կարողունակության զարգացման աստիճանը՝ ըստ կերպարվեստի դասընթացի չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների մակարդակի:

Գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում):

«Կերպարվեստ» առարկայի ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով:

Ձևավորող գնահատման դեպքում օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններ և մեկնաբանություններ, որոնք համեմատվում են ՀՊՉ տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:

Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը, որն իր հերթին ապահովում է կրթական գործընթացի շարունակականությունը:

Առաջադրանքները բնույթով կարող են տարբեր լինել: Հաշվի են առնվում աշակերտների՝ արվեստի հայտնի գործիչների ստեղծագործություններին առնչվող փաստերի իմացությունը, գիտելիքների կիրառումը, տրամաբանական եզրահանգումները, վերլուծությունները, համեմատությունները, ինքնուրույն ստեղծագործական և գեղարվեստական գործունեությունը:

Կերպարվեստի դասերի ընթացքում ձևավորող գնահատման նպատակով երաշխավորվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝

1) թեմայի բովանդակության ընկալման և ստեղծագործական գործունեության վերաբերյալ բանավոր և գրավոր հարցումներ,
2) ինքնուրույն գործնական աշխատանքում նյութերի, միջոցների և մոտեցումների կիրառում, բովանդակության վերլուծություններ, քննարկումներ, զրույցներ,
3) ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
4) ուսուցման խմբային աշխատանքի կազմակերպում,
5) ցուցահանդեսներ, միջոցառումներ, ելույթներ, ստուգատեսներ և այլն:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի կատարվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ որպես տարեկան ամփոփիչ գնահատական՝ կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Առաջարկվում է որպես կիսամյակի ամփոփիչ միջոց կիրառել ցուցահանդեսների, միջոցառումների, ստուգատեսների կամ բաց դասերի ձևաչափերը:

Միավորային գնահատումն իրականացվում է որոշակի ժամանակահատվածում ուսումնական նյութի որոշակի ծավալի շրջանակներում սովորողների ձեռքբերումները պարզելու և պաշտոնապես գրանցելու նպատակով: Միավորային գնահատումը սովորաբար իրականացվում է առանձին թեմատիկ միավորի ուսուցման, քառորդի կամ կիսամյակի վերջում:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից՝ գնահատման համար սահմանելով 10 միավորային սանդղակ:

10 միավորային սանդղակում որևէ թիվ չի համարվում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները և սկսվում 1 միավորից:

Սովորողների նախագծային աշխատանքները գնահատվում են կիսամյակի ավարտին կամ տարեվերջին: 7-12-րդ դասարաններում սովորողների միավորային գնահատականները ձևավորվում են նաև անհատական կամ խմբային ուսումնական նախագծերի հիման վրա:

ԲԱԺԻՆ 4. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ (Կ) ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

Նոր գեղարվեստական գաղափարների և ստեղծագործություն-ների ձևակերպում, զարգացում և ավարտ	**ՍՏԵՂԾՈՒՄ (Ս)**	**Նյութեր, միջոցներ և մոտեցումներ (ՆՄ)**	*1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D:*
			2. Ձևավորել համապատասխան բառապաշար:
			3. Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:
		Դիզայնի տարրեր և սկզբունքներ (ԴՏ)	*1. Ցուցադրել գիտելիքներ կերպարվեստի և դիզայնի տարրերի վերաբերյալ*
			2. Կիրառել դիզայնի սկզբունքները գործնական աշխատանքներում:
		Նորարարություն, երևակայություն (ՆԵ)	*1. Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:*
			2. Ստեղծել 2D և 3D վերացական արվեստի աշխատանքներ:
			3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:
Գեղարվեստական ստեղծագործություն-ների մեկնաբանություն և ներկայացում	**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (Ն)**	**Վերանայում և ցուցադրում (ՎՑ)**	*1. Ընտրել և խմբավորել աշխատանքները, ստեղծել պորտֆոլիո:*
			2. Խմբով աշխատել ցուցադրություններ կազմակերպելու նպատակով:
			3. Պատրաստել նախագծեր և առավել արդյունավետ ցուցադրել դրանք:
		Մեկնաբանում (Մ)	*1. Ընտրել և քննարկել աշխատանքները ցուցադրության համար:*
			2. Նշել այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել են

			ցուցադրություն կազմակերպելիս:
Արվեստի միջոցով իմաստի արտահայտման /փոխանցման ընկալում, գիտակցում և գնահատում	**ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ (ԸՆԿԱԼՈՒՄ) (Ա)**	**Քննադատական արձագանք (ՔԱ)**	*1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը:*
			2. Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը, ոճերը:
			3. Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:
		Գնահատում և ինքնագնահատում (Գ)	*1. Ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:*
			2. Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:
Գեղարվեստական գաղափարների և աշխատանքների համադրումն անհա-տական/մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ	**ԿԱՊԱԿՑՈՒՄ (Կ)**	**Արվեստ, տեխնոլոգիաներ և գյուտեր (ԱՏ)**	*1. Սեփական աշխատանքները ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումներով:*
			2. Վերլուծել, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչները:
		Արվեստի պատմություն (ԱՊ)	*1. Ներկայացնել գիտելիքներ արվեստի պատմությունից և տեսությունից:*
			2. Ներկայացնել հայկական կերպարվեստի հիմնական ուղղությունները:
		Արվեստի դերը և նշանակությունը (ԱԴ)	*1. Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների ազդեցությունը:*
			2. Իմանալ մշակութային հաստատությունների նշանակությունը:
			3. Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:

ԲԱԺԻՆ 5. «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում են՝

1) իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը,
2) վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը,
3) ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը,
4) գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը,
5) ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասընթացն իրականացվում է երկու հիմնական բաժիններով՝ գեղարվեստական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում:

Գեղարվեստական գործունեություն - Գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն/դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ:

Գաղափարների հավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների և միջոցների ուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ:

Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների ուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում: Թեմատիկ պատկերում. իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներով սովորողների իրատեսական, վերացական, երևակայական տպավորությունների հաղորդում: Ստեղծագործական աշխատանքների վերանայում, ավարտ և ցուցադրություն:

Արվեստի միջոցով իրականության ընկալում - Ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննարկում, գնահատում և արժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրություն:

Արվեստագետների դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրություն: Տեխնոլոգիական նորարարությունների դերն արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ: Արվեստի ուսումնասիրումը և մյուս առարկայական բնագավառները: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերպարվեստի ուսումնական գործունեությունն իրականացվում է խառը ուսուցման ձևաչափով՝ ելնելով թեմայի բովանդակությունից, առաջարկվող գործունեության ձևերի բնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել

դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները համադասարանական, անհատական, զույգերով և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, նվագարաններով, տեխնիկապես հագեցած արվեստի սենյակներում կամ դպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում կարող են ընտրվել ուսումնական գործունեության այլընտրանքային տեսակներ:

3. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրերում առարկայի բովանդակային գծերը տարածվում են միասնաբար և փոխկապակցված, ամբողջական թեմատիկ միավորների միջոցով, պահպանելով բովանդակության պարուրաձև սկզբունքը:

Ուսումնասիրվող յուրաքանչյուր միավորի համար նշված են՝

1) համապատասխանությունն առարկայական վերջնարդյունքին (նաև ինտեգրված),
2) տվյալ թեմայի ուսումնասիրության արդյունքում ակնկալվող վերջնարդյունքները,
3) նպատակը, ուղղորդող հարցադրումները,
4) թեմայի բովանդակային բաղադրիչը, դրա հետ առնչվող գործունեության ձևերը,
5) խաչվող ընդհանրական հասկացությունները, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում,
6) առաջարկվող թեմատիկան, որի շուրջ կազմակերպվում են ստեղծագործական գործընթացները,
7) միջառարկայական կապերը, որոնք ապահովելու են տվյալ միավորի ուսումնասիրության ամբողջականությունը,
8) համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչին:
9) Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:

4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսված ստեղծագործական գործընթացները ձևավորված են չափորոշչով սահմանված և կարողունակություններին միտված՝ սովորողներին ներկայացվող ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա: Մյուս վերջնարդյունքներին կերպարվեստի դասընթացն առնչվում է անուղղակիորեն:

Հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ինչպես նաև կոգնիտիվ և ստեղծագործական մտածողության անհատական առանձնահատկությունները՝ առաջարկում ենք առարկայական ծրագրերը կառուցել ոչ թե տարեկան, այլ երկամյա դասընթացների ուսումնառության վերջնարդյունքների հիմքով: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող բովանդակությունը յուրացնել առավել ամբողջական՝ սովորողներին չկաշկանդելով ստեղծագործական գործունեության պարտադրանքով:

Այսպիսով, կերպարվեստ առարկայի շրջանակներում իրականացվող ստեղծագործական գործունեության համար մշակված վերջնարդյունքները ներկայացված են հանրակրթական դպրոցի երեք աստիճաններում՝ տարրական, հիմնական (միջին) և միջնակարգ (ավագ), և ընդհանրական են 1-2-

րդ, 3-4-րդ, 5-6-րդ, 7-8-րդ և 10-12-րդ դասարաններում: 9-րդ դասարանը՝ որպես հիմնական (միջին) դպրոցի ավարտական փուլ, ներկայացված է առանձին վերջնարդյունքներովև ծրագրով:

Առարկայի ուսուցման չափորոշչային ընդհանրական վերջնարդյունքների ծածկագրումը



Համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչին

Առարկայական ծրագրերի բոլոր բաժիններում կարողունակությունների ձևավորման ակնկալվող վերջնարդյունքները նշված են ծածկագրերով՝ հանրակրթական տարրական (Տ), հիմնական (Հ) և միջնակարգ (Մ) ծրագրի և շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հաջորդական թվին համապատասխան:

6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ **Սովորողները հետազոտում, ստեղծում, ներկայացնում, վերլուծում, քննարկում և կապակցում են կերպարվեստային գաղափարներ և ստեղծագործություններ**		
Տարրական դպրոց		
ՍՏԵՂԾՈՒՄ Նոր գեղարվեստական գաղափարների և ստեղծագործություն-ների ձևակերպում, զարգացում և ավարտ	**Նյութեր, միջոցներ և մոտեցումներ**	*Փորձարկել տարբեր նյութեր, նաև թափոններ՝ հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ:* *Փորձարկել տարբեր միջոցներ, գտնել ստեղծագործա-կան աշխատանքներ ստանալու հետաքրքիր մոտեցումներ (2D, 3D):** *Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության:* *Ձևավորել համապատասխան բառապաշար* *Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը:* *Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:*
	Դիզայնի, կերպարվեստի տարրեր և սկզբունքներ	*Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ գիծ, գույն, ձև, ծավալ, տոն, տարածություն, ռիթմ, միասնականու-թյուն/բազմազանություն, մակերես:* *Նշել արվեստի ստեղծագործություններում և շրջակա միջավայրում առկա պատկերներ, ձևեր, գույներ: Կիրառել կերպարվեստի տարրերը բնօրինակից պատկերելու և թեմատիկ աշխատանքների միջոցով:*
	Նորարարություն, երևակայություն	*Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներ-կայացնելով այլ մեկնաբանություններով (գունային երանգներ, միայն գիծ, միայն տոն): Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:* *Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից:* *Ստեղծել 2D, 3D և 4D երևակայական թեմատիկ աշխատանքներ:*
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Գեղարվեստակա ն ստեղծագործու-	**Վերանայում և ցուցադրում**	*Ընտրել և խմբավորել աշխատանքները, ստեղծել թղթապանակ (պորտֆոլիո):* *Ընտրել տարվա ընթացքում կատարված աշխատանքներից ցուցադրման համար:*

թյունների մեկնաբա-նություն և ներկա-յացում		*Խմբով մասնակցել ցուցադրությունների:* *Խմբով աշխատել ցուցադրություններ կազմակերպելու նպատակով:*
		Առաջարկել ցուցադրության արդյունավետ տարբերակ-ներ: *Ընտրել ցուցադրության համար ոչ ավանդական տարբերակ:*
	Մեկնաբանում	*Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանք-ները:* *Ընտրել ստեղծագործություններ և քննարկել դրանք ծնողի, դասընկերոջ կամ ուսուցչի հետ, բացատրել, թե ինչպես է կատարվել աշխատանքը:*
		Մեկնաբանել սեփական աշխատանքները: *Բացատրել, թե ինչպես են ընտրվել նկարները ցուցադրություն կազմակերպելիս:*
ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ (ԸՆԿԱԼՈՒՄ) Արվեստի միջոցով իմաստի արտահայտման /փոխանցման ընկալում, գիտակցում և գնահատում	**Քննադատական արձագանք**	*Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկեր-ները դարձել նկար:* *Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը:*
		Դասակարգել աշխատանքներն՝ ըստ տեսակների: *Դասակարգել կերպարվեստի տեսակները:*
		Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:
	Գնահատում և ինքնագնա-հատում	*Գնահատել իր և ընկերների աշխատանքները:* *Բացարել, թե ինչու է հավանում նկարը:* *Գնահատել ստեղծագործական կարողությունները:*
ԿԱՊԱԿՑՈՒՄ Գեղարվեստական գաղափարների և աշխատանքի հա-մադրումը անհատա-կան/ մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ	**Արվեստ, տեխնոլոգիաներ և գյուտեր**	*Նույն թեմայով աշխատանքը ներկայացնել տարբեր նյութերով:* *Սեփական աշխատանքերը ներկայացնել տեխնոլոգիալան նոր մոտեցումներով:*
		Վերլուծել, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչները, քանդակագործներն ու ճարտարա-պետները:
	Արվեստի պատմություն	*Ձևակերպել և ներկայացնել կերպարվեստի բնագավա-ռում առկա հիմնական միտումները: Քննարկել, թե ինչպես են ժամանակը, տեղը և մշակույթը արտացոլվում առանձին ստեղծագործություններում:*
		Կարծիք հայտնել հայազգի արվեստագետների ստեղ-ծագործությունների մասին: *Ներկայացնել հայկական կերպարվեստի սիրած արվեստագետներին*

	Արվեստի դերը և նշանակությունը	*Ներկայացնել, թե ինչով է արվեստի ստեղագործությունը նման կամ տարբեր իրականությունից: Ներկայացնել արվեստի ստեղծագործություններում պատկերված միևնույն թեմայի տարբեր արտահայտությունները:*
		Ներկայացնել մշակութային հաստատություններն՝ ըստ նշանակության: Հայտնել կարծիք մշակութային հաստատությունների նշանակության վերաբերյալ:
		Աշխատանքները կապել սեփական կյանքի փորձի հետ: Ներկայացնել արվեստի դերն իր շրջապատում:

* <u>Ծանոթագրություն</u>

2D - Հարթության վրա գեղանկարչական, գծանկարչական, գրաֆիկական աշխատանքներ (մատիտ, գրիչ, ջրաներկ, ակրիլ, յուղաներկ, թանաք և այլն): Կոլաժ, մոնտաժ, ֆրոնտաժ, տպագրություն, փորագրություն, դաջվածք թղթի, ստվարաթղթի, գործվածքի, փայտի վրա: Բատիկ, լուսանկար, նաև՝ թվայնացված:

3D - Կավով կամ ծեփոնով աշխատանքներ (ծեփ, փորագրություն), կաղապար, հարթաքանդակ, բարձրաքանդակ, կլոր քանդակ, ծավալային աշխատանքներ: Ինստալյացիա: Տեքստիլ: Առակաների, պատկերների, տարածքների (ինտերիեր, էքստերիեր) ձևավորում: Ոսկերչական, արծաթագործական իրերի և առարկաների, մարմնի վրա կրելու զարդերի ձևավորում:

4D -Ներկայացումներ: Ցուցադրության ենթակա աշխատանքներ, որոնք դիտելու համար ժամանակ է պահանջվում: Տեսագրություններ, թվային անիմացիոն աշխատանքներ և այլն:

2D, 3D, 4D ձևաչափերը կարող են իրականացվել հաղորդակցական և թվային տեխնոլոգիաների լայն կիրառմամբ:

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(1-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

Օգնել սովորողներին՝

- ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում,
- կառուցել ֆիզիկական պարզ մոդելներ,
- բերել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ,
- դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողության պարզ հմտություններ և կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- հասկանալ իր առջև դրված խնդիրները, մշակել և կատարել քայլեր դրանք լուծելու համար,
- ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել դիտողականությունը՝ ձևավորելով ստեղծագործական և տրամաբանական մտածողություն,
- կիրառել տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար,
- ճանաչել և հարգել ՀՀ պետական խորհրդանշանները և իմանալ պետական տոների հիմնական բովանդակությունը,
- արդյունավետ համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, լսելով և հասկանալով այլոց կարծիքը, արտահայտելով սեփական տեսակետը:

Ձևավորել՝

- տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտություններ,
- սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքներին անդրադառնալու և արձագանքելու կարողություններ,
- իր առջև դրված խնդիրը մշակելու և այն լուծելու համար քայլեր կատարելու կարողություն,
- շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների և դրանց փոխադարձ կապերի մասին գիտելիքներ և դրանք նկարագրելու կարողություններ,
- պարզ ուսումնասիրություններ, առաջադրանքներ, եզրակացություններ կատարելու հմտություններ,
- նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար ստեղծագործական տարբեր եղանակներ կիրառելու կարողություն,
- տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու, այլոց կարծիքը լսելու և արձագանքելու կարողություններ,
- ընտանեկան, խմբային, ազգային և քաղաքացիական պատկանելության վերաբերյալ պարզ մեկնաբանություններ կատարելու կարողություններ,

- զգայարաններով ստացած տեղեկությունների՝ որպես աշխարհաճանաչողության միջոցի ընկալում,
- սեփական զգացմունքների ճանաչման, սեփական մտքերի, զգացմունքների, կարիքների և ցանկությունների արտահայտման կարողություններ և յուրահատուկ լինելու գիտակցություն,
- պարզ հիմնավորումներ, ընդհանրացումներ և դասակարգումներ կատարելու հմտություններ,
- նախնական գիտելիքներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին,
- այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք,
- անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու հմտություններ,
- փորձարկելու, հետազոտելու, երևակայելու, ձևավորելու, սեփական գաղափարներն ու զգացմունքներն արվեստի միջոցով արտահայտելու հմտություններ:

1-2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
ՆՅՈՒԹԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Ձևավորել նյութեր, մեթոդներ և միջոցներ փորձարկելու կարողություններ: Զարգացնել համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողություններ:	**1-2.Կ.Ս.ՆՄ.1.** Փորձարկել տարբեր նյութեր հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ, նաև՝ թափոններից: **1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: **1-2.Կ.Ս.ՆՄ.3.** Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը: **1-2.Կ.Ս.ՆԵ.1.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով ուրիշ գունային երանգներով, միայն գծով, միայն տոնով: **1-2.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից: **1-2.Կ.Ս.ՆԵ.3.** Ստեղծել 2D և 3D երևակայական աշխատանքներ: **1-2.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:
Ուղղորդող հարցադրում	
Ինչպե՞ս են արվեստագետները նախապատրաստվում, ի՞նչ գործիքներ և միջոցներ են օգտագործում: Ի՞նչ են պատկերում արվեստագետները: Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի կանոններ: Կարո՞ղ է դասարանը վերածվել արվեստանոցի:	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝		
• Անվանել գույները: • Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: • Ստեղծել պարզ նախշեր: • Ստանալ ծավալային պատկերներ: • Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ: • Բնօրինակից ստանալ վերացական պատկերներ: • Ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով (կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն): • Արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ՝ եզրագծերով, տոներով և գունային երանգներով: • Պատմել իր և ընկերների աշխատանքների մասին: • Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: • Ներկայացնել կարծիք:		
Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Ստեղծագործական աշխատանքի համար կիրառվող գործիքները և նյութերը: Նյութերի և գործիքների անվանումները: Ստեղծագործական աշխատանքներն արտահայտիչ դարձնելու հնարները: Թուղթը՝ որպես հարթություն: Թուղթը՝ որպես ծավալ ստանալու միջոց: Ծավալային պատկերներ: Կավը, ծեփոնը (պլաստիլին), մետաղալարը կամ պլաստիկը՝ որպես գեղարվեստական նյութ: Հարթության վրա առարկաների պայմանական տեղաբաշխումը: Գունանկար, գծանկար, տպագրություն /դաջվածք, ծավալային աշխատանքների կատարման մեթոդները: Դաջվածքի համար օգտագործվող միջոցների կիրառման կանոնները: Մասնագիտական բառապաշար: Անվտանգության կանոններ:	Վարժություններ տարբեր որակների և գույների թղթերի վրա: Նկարչական միջոցների փորձարկում. մատիտներ, յուղամատիտներ, մարկերներ, վրձիններ, ներկեր: Աշխատանքներ կավով կամ ծեփոնով: Գծանկարչական և գեղանկարչական նյութերի փորձարկում: Դիտում և ուսումնասիրում: Վերացական հորինվածքների ստեղծում բնական մոտիվների հիման վրա (2D, 3D): Կազմման տարբերակներ՝ միմյանց և թղթի կենտրոնի նկատմամբ պատկերների սիմետրիկ և ոչ սիմետրիկ տեղաբաշխմամբ: Աշխատանքների քննարկում և մեկնաբանում:	**Պատճառ և հետևանք** Նյութի և արդյունքի կապը. Ներկանյութի որակը և խտությունը թղթի վրա տարբեր արդյունքներ են տալիս: **Համաշխարհայնացում** Գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, մարդ-կային գործունեության վրա:

Առաջարկվող թեմատիկա
«Իմ սիրելի խաղալիքը», «Նվեր ամենահոգատարին», «Տնակ կենդանիների համար», «Անձրևոտ օր», «Փողոցում», «Սփոռոց», «Խորհրդանիշներ», «Բնության ձայներ», «Այգի»:
Միջառարկայական կապ
Մայրենի՝ բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, ստեղծագործությունների ընթերցում և քննարկում: ***Մաթեմատիկա՝*** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ՝ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում, դեկորացիաներ պատրաստելիս չափումների կատարում, դետալների գծագրում: ***Տեխնոլոգիա՝*** թղթի, բնական և արհեստական նյութերի մշակման համար համապատասխան գործիքների, միջոցների ու սարքավորումների ընտրություն: ***Երաժշտություն՝*** քննարկվող թեմաների, տարբեր երգերի ունկնդրում: ***Ֆիզկուլտուրա՝*** մարմնամարզություն, անձնական հիգիենայի պահպանում, սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում: ***Թատրոն՝*** թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների կերպարների էսքիզներ: ***Ես և շրջակա աշխարհը՝*** պահպանել անձնական հիգիենա՝ մարմնի խնամք. տեսողություն, լսողություն, կեցվածք: ***Օտար լեզուներ՝*** նյութերի և գործիքների անվանումներ:
Կապը ՀՊՁ վերջնարդյունքների հետ
S4, S5, S9, S10, S24, S32, S34, S36

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Ձևավորել կերպարվեստի ստեղծագործական աշխատանքներ կատարելու տարրերն ու սկզբունքներն ուսումնասիրելու և փորձարկելու կարողություններ:	**1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: Ձևավորել բառապաշար: **1-2.Կ.Ա.ԴՏ.1.** Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ գիծ, գույն, ձև, ծավալ, ռիթմ: **1-2.Կ.Ա.ԴՏ.2.** Նշել արվեստի ստեղծագործություններում և շրջակա միջավայրում առկա պատկերներ, ձևեր, գույներ: **1-2.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից: **1-2.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ:
Ուղղորդող հարցադրում Ինչպե՞ս են արվեստագետներն աշխատում: Ի՞նչ է հարկավոր իմանալ գրագետ աշխատելու համար: Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի օրինաչափություններ:	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

- անվանել նյութերն ու գործիքները,
- կիրառել հիմնական և բաղադրյալ գույները և ստանալ նոր գույներ,
- ստեղծել պարզ նախշեր,
- գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ստանալ ճանաչելի պատկերներ և հորինվածքներ,
- բնօրինակից ստանալ վերացական պատկերներ,
- ստեղծել հարթ և ծավալային երևակայական պատկերներ:
- ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով (կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն),
- նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,
- պատմել իր և ընկերների աշխատանքների մասին,
- աշխատանքներում պահպանել համաչափությունը,
- աշխատանքներում արտահայտել սեփական կյանքի փորձը և գիտելիքները,

Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Կերպարվեստի տարրերը՝ գիծ, գույն, ձև, ռիթմ: Արվեստի ստեղծագործություններում և շրջակա միջավայրում առկա պատկերներ, ձևեր, գույներ:	Վարժություններ գույներով և գուներանգներով: Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծում: Միայն գծի միջոցով պարզ պատկերների, ձևերի և առարկաների պատկերում:	**Օրինաչափություններ** Կատարել դասակարգումներ, բացահայտել որոշակի սկզբունքով

Գիծ: Գծերի տեսակները: Գույն: Հիմնական և բաղադրյալ գույներ: Ձևերի և պատկերների տեսակները՝ երկրաչափական, բուսական և կենդանական ձևեր: Ուրվանկար և ձևաչափ: Պատկերավորման փոխանցում: Գեղագրություն: Հեռու – մոտ: Խոսք-պատկեր- շարժում: Դեկորատիվ հորինվածքի հիմնական օրինաչափությունները՝ համաչափություն, անհամաչափություն (սիմետրիա, ասիմետրիա): Ուրվապատկերներ, նշաններ և խորհրդանիշներ: Զարդանախշ: Համաչափություն: Ծավալ:	Բնապատկերի կատարում գծի միջոցով: Շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկերների տեսակների բացահայտում: Տարբեր նյութերով և միջոցներով երկրաչափական, բուսական և կենդանական ձևերի պատկերում: Նախշերի կատարում, կիրառական արվեստի նմուշների պատկերազարդում, շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում: Պարզ պատկերների, ձևերի և առարկաների պատկերում և գունավորում: Պարզ երկրաչափական, բուսական կամ կենդանական պատկերների միջոցով կոլաժների պատրասում: Խճանկար: Տառատեսակների և գեղագրության ուսումնասիրում: Միևնույն տառը որպես գեղարվեստական պատկեր ստանալու վարժություններ: Ուրվապատկերների, նշանների, նախշերի և խորհրդանիշների պատկերում կամ պատրաստում (2D, 3D): Պարզ երկրաչափական, բուսական կամ ազատ ձևերի միջոցով բնապատկերի, դիմանկարի կամ նատյուրմորտի կատարում:	կրկնվող պատկերները կամ երևույթները: **Համակարգ և մոդել** Միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն (գունային անիվ), որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն:
Առաջարկվող թեմատիկա		
«Ես և իմ անունը», «Իմ ընտանիքը», «Ես աշակերտ եմ», «Անցյալ, ներկա և ապագա», «Օրվա ռեժիմ», «Չափումներ», «Այբուբեն», «Սփրոց», «Մուլտֆիլմերի սիրելի հերոսներ»:		
Միջառարկայական կապ		
Մայրենի ՝ բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, հատկանիշ ցույց տվող բառերի պատկերավորումներ: ***Մաթեմատիկա՝*** երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում, չափումների կատարում, դետալների գծագրում: ***Երաժշտություն*** ՝ քննարկվող թեմաների, երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, երաժշտական բեմադրությունների ձևավորում: ***Ֆիզկուլտուրա*** ՝ մարմնամարզություն, անձնական հիգիենայի պահպանում, սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում:		

Թատրոն՝ թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում և կերպավորում: ***Ես և շրջակա աշխարհը՝*** բնության օրացույցի վարման միջոցով եղանակի փոփոխության դիտարկում և մարդկանց կյանքի ու գործողությունների համապատասխանեցում դրանց (հագուստի, սննդակարգի, զբաղմունքների փոփոխություն): Դասարանում և տանը կանաչ անկյունների ստեղծում, բույսերի խնամք և դրանց աճի ուսումնասիրում. համապատասխան գրառումներ նշանային պարզ համակարգի կիրառմամբ: ***Օտար լեզուներ -*** Գլխավոր թեմաների ուսուցման պատկերազարդումներ, թեմատիկ առաջադրանքների և եզրույթների մեկնաբանություններ: Թեմատիկ նկարազարդումներ:
Կապը ՀՊՉ-ի վերջնարդյունքների հետ
S3, S4, S5, S8, S9, S10, S12, S16, S17, S18, S32, S34

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Ապահովել համապատասխան միջավայր՝ իրատեսական, վերացական և երևակայական 2D և 3D աշխատանքներ ստեղծելու համար:	**1-2.Կ.Ս.ՆՄ.1.** Փորձարկել տարբեր նյութեր՝ հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ, նաև՝ թափոններից (ստվարաթուղթ, պլաստիկ): **1-2.Կ.Ս.ՆՄ.3.** Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը:
Ուղղորդող հարցադրում	
Ինչպե՞ս են արվեստագետները ստեղծագործում: Ինչպե՞ս են արվեստագետները կռահում, որ աշխատանքը հաջողված է: Կարելի՞ է արդյոք սովորել սեփական սխալների վրա: Հնարավո՞ր է պատկերել զգացողություն:	**1-2.Կ.Ս.ՆԵ.1.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով ուրիշ գունային երանգներով, միայն գծով, միայն տոնով: **1-2.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից: **1-2.Կ.Ս.ՆԵ.3.** Ստեղծել 2D և 3D երևակայական աշխատանքներ: **1-2,Կ.Ա.ՎՄ.2.** Մեկնաբանել սեփական աշխատանքները: **1-2.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:
Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝	
• հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները, • ստեղծել պարզ նախշեր, • ստանալ ծավալային պատկերներ, • բնօրինակից ստանալ վերացական պատկերներ,	

- ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ,
- ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով (կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն),
- նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար,
- արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ, եզրագծերով, տոներով և գունային երանգներով,
- մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ,
- ներկայացնել կարծիք:

Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում: Դիմանկար, ինքնանկար: Բնանկար: Նատյուրմորտ: Իրականության, բնության որոշ երևույթներ, կենցաղային թեմաներ: Թեմատիկ հորինվածք:	Համաչափության, գծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ: Դիմագծերի ընդհանրացման և նմանության կարողությունների ձևավորման վարժություններ: Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում: Թեմատիկ նկարչություն՝ դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով: Առարկաների պատկերում ճեպանկար, բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: Ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերի ստեղծում (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա)՝ առանց նախօրոք մատիտով արված նկարի: Կենդանիների, թռչունների և մարդու մարմնի պատկերում: Նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում: Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում):	**Պատճառ և հետևանք** Նյութի ընտրությունը և արդյունքի կապը: Պատկերվող առարկաների տեղադրումը թղթի հարթության վրա (հորիզոնական, ուղղահայաց) փոխում է աշխատանքի վերջնական տեսքը: **Օրինաչափություններ** Պատկերվող տարրերի, ձևերի կամ առարկաների դասակարգումներ, ընդհանրությունների բացահայտում:

	Աշխատանքային միջավայրը նաև դասասենյակն է, սեղանը, այն պարագաները, որոնցով ստեղծագործում են: Աշխատանքային գործիքների՝ իրենց սեղանի, սեղանի վրա գրիչների ու մատիտների պատկերում:	

Առաջարկվող թեմատիկա
Պարզ նատյուրմորտներ, բնապատկերներ: ***Հեքիաթի ձևավորում. «Երեք խոզուկների հեքիաթը», «Սևուկ ուլիկը», «Ծիտը», «Գայլն ու գառը», «Սուտլիկ որսկանը», «Պոչատ աղվեսը», «Շունն ու կատուն», կենդանիներ, մուլտֆիլմերի հերոսներ, «Գիշեր-ցերեկ», տիկնիկային ներկայացման ձևավորում:***
Միջառարկայական կապ
Մայրենի՝ Բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, հատկանիշ ցույց տվող բառերի պատկերավորումներ: ***Մաթեմատիկա՝*** Երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում, չափումների կատարում, դետալների գծագրում: ***Երաժշտություն՝*** Քննարկվող թեմաների, երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, երաժշտական բեմադրությունների ձևավորում: ***Ֆիզկուլտուրա՝*** մարմնամարզություն, անձնական հիգիենայի պահպանում, սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում: ***Թատրոն՝*** թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում և կերպավորում: ***Ես և շրջակա աշխարհը՝*** տարբերակել և համադրել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, հետազոտել, ներկայացնել, որ նույն տեղեկությունը կարելի է տարբեր զգայարաններով զգալ: ***Օտար լեզուներ՝*** գլխավոր թեմաների ուսուցման պատկերազարդումներ, թեմատիկ առաջադրանքների և եզրույթների մեկնաբանություններ: Տարբեր երկրների հեքիաթներ, դրանց հերոսներ:
Կապը ՀՊՁ-ի վերջնարդյունքների հետ
S4, S5, S7, S8, S9, S10, S16, S18, S22, S26, S32

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Ստեղծագործական աշխատանքներն ընտրելու, խմբավորելու, ցուցադրելու և անձնական թղթապանակ (պորտֆո-	**1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: Ձևավորել բառապաշար:

լիո) ստեղծելու կարողությունների ձևավորում:	**1-2.Կ.Ս.ՆՄ.3.** Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը: **1-2.Կ.Ա.ՎՑ. 1.** Ընտրել և խմբավորել աշխատանքները, ստեղծել թղթապանակ: **1-2.Կ.Ա.ՎՑ. 2.** Խմբով մասնակցել ցուցադրությունների: **1-2.Կ.Ա.ՎՑ.3.** Առաջարկել ցուցադրության արդյունավետ տարբերակներ: **1-2.Կ.Ա.ՎՄ.1.** Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները: **1-2.Կ.Ա.ՎՄ.2.** Մեկնաբանել սեփական աշխատանքները: **1-2.Կ.Ա.ՔԱ.1.** Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկերները դարձել նկար: **1-2.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: **1-2.Կ.Կ.ԱԴ.3.** Աշխատանքները կապել սեփական կենսափորձի հետ:
Ուղղորդող հարցադրում Ինչպե՞ս են պահվում ստեղծագործությունները: Ովքե՞ր են դրանք հավաքում, պահպանում և ի՞նչ նպատակով: Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները: Հարկավո՞ր է արդյոք ցուցադրել աշխատանքները: Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության ցուցադրություն:	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

- անվանել նյութերն ու գործիքները,
- նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար,
- ստեղծել աշխատանքային տետր և թղթապանակ (պորտֆոլիո),
- տեսակավորել և խմբավորել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների,
- առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ,
- նկարագրել արվեստի ստեղծագործությունները,
- մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը,
- մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ,
- ներկայացնել կարծիք,

Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Աշխատանքների ընտրություն: Թղթապանակ: Թղթապանակների ստեղծման չափանիշները և պայմանները: Նախագծային աշխատանք: Ցուցադրություն: Արդյունավետ ցուցադրություններ կազմակերպելու առանձնահատկությունները:	Ստեղծել աշխատանքային տետր կամ անձնական թղթապանակ (պորտֆոլիո): Մենակ կամ խմբով առանձնացնել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների: Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք է պատրաստվեն աշխատանքները ցուցադրության համար: Մեկնաբանել ստեղծագործություններից ստացած տպավորությունները: Բացատրել. թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները:	**Պատճառ և հետևանք** Պատկեր և ազդեցություն կապը. ցուցադրության որակը տարբեր ընկալումներ է առաջացնում: **Անհատական և մշակութային արժեհամակարգ** Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր ար-

	Նշել և մեկաբանել ցուցադրության կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները: Մեկնաբանել սեփական աշխատանքները: Աշխատել խմբով: Սովորողների կողմից կատարված աշխատանքների կամ թեմատիկ առանձին ուղղվածություն պարունակող ստեղծագործությունների և առարկաների ցուցադրություն: Դասընթացների այս ձևը կարող է կազմակերպվել որևէ առարկայի հետ ինտեգրված:	ժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը:

Առաջարկվող թեմատիկա

«Իմ քաղաքը», «Իմ գյուղը», «Մեր լեռներն ու լճերը», «Արհեստներ», «Հեքիաթ», «Հայկական գորգ», «Տոնակատարություն», «Դիմակահանդես»:

Միջառարկայական կապ

Մայրենի - Բանաստեղծությունների, հեքիաթների, պատմվածքների, առակների ունկնդրում և ընթերցում, մանրապատում ստեղծագործությունների ընթերցում և քննարկում, հատկանիշ ցույց տվող բառերի պատկերավորումներ:

Մաթեմատիկա - Երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում, չափումների կատարում, դետալների գծագրում:

Երաժշտություն - Քննարկվող թեմաների, երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, երաժշտական բեմադրությունների ձևավորում:

Ֆիզկուլտուրա - Մարմնամարզություն, անձնական հիգիենայի պահպանում, սեփական անձի նկատմամբ հարգանքի և հոգատարության զարգացում:

Թատրոն - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում և կերպավորում:

Ես և շրջակա աշխարհը - Նկարագրել իրենց զբաղմունքը, նախասիրությունները, հետաքրքրությունները, համեմատել մյուսների հետ:

Կապը ՀՊՉ -ի վերջնարդյունքների հետ

S4, S5, S7, S8, S9, S14, S16, S17, S18, S19, S25, S26, S27, S32

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու, քննարկելու և դատողություններ անելու հմտությունների ձևավորում:	**1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևավորել բառապաշար: **1-2.Կ.Ա.ՎՄ.2.** Մեկնաբանել սեփական աշխատանքները:
Ուղղորդող հարցադրում	**1-2.Կ.Ա.ՔԱ.1.** Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկերները դարձել նկար:

Ի՞նչ է պատկերը: Ստեղծագործությունից ի՞նչն է ավելի շատ տպավորվում, ազդում մարդկանց վրա: Ինչպե՞ս գնահատել ստեղծագործությունները:	**1-2.Կ.Ա.ՔԱ.2.**Դասակարգել աշխատանքները՝ ըստ տեսակների: **1-2.Կ.Ա.ՔԱ.3.**Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: **1-2.Կ.Ա.Գ.1.** Գնահատել իր և ընկերների աշխատանքները: **1-2.Կ.Կ.ԱԴ.1.**Ներկայացնել, թե ինչով է արվեստի ստեղծագործությունը նման կամ տարբեր իրականությունից:

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

- նկարագրել արվեստի ստեղծագործությունները,
- մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները՝ ըստ տեսածի և զգացածի,
- դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,
- աշխատանքները գնահատել՝ ըստ արտահայտչականության, գրագիտության, հիմնական գաղափարի փոխանցման,
- հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով:
- նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,
- համեմատել ընկերների աշխատանքները,
- ներկայացնել կարծիք, մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ:

Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Տեսածի նկատմամբ վերաբերմունքի արտահայտում: Ստեղծագործության զգայական անդրադարձ: Գնահատում և ինքնագնահատում: Արվեստի ստեղծագործության քննարկում: Կերպարվեստի տեսակները:	Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքների արտահայտում հարց ու պատասխանի, ռուբրիկների միջոցով: Համեմատել՝ - միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքները, - նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխատանքները, - միևնույն ժանրի ստեղծագործությունները: Քննարկել, վերլուծել, դասակարգել և գնահատել արվեստի ստեղծագործությունները: Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ: **Նկարագրել** - Ի՞նչ է պատկերված: **Ներկայացնել** - Արվեստի ո՞ր տեսակին է պատկանում	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Ուսումնասիրել այն ուղիները, որոցով արտահայտված գաղափարները և հա-մոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղ-ծարարությունը:

	աշխատանքը: **Վերլուծել** - Ի՞նչ պատկերներ են կիրառված: Ի՞նչ նպատակով են օգտագործված հենց այդ պատկերները: **Մեկնաբանել** - Ինչի՞ մասին է պատմում ստեղծագործությունը: **Քննարկել/գնահատել** - Աշխատանքը հաջողվա՞ծ է, թե՝ ոչ: Այս աշխատանքներից ո՞րը կարելի է ձեռք բերել: Ինչո՞ւ՝ այո և ինչո՞ւ՝ ոչ:	

Միջառարկայական կապ
Մայրենի՝ մասնակցել խմբային աշխատանքների պատմություններ հորինելու, թեմատիկ աշխատանքներ ստեղծելու, փոքրիկ ուսումնասիրություններ կատարելու նպատակով: ***Մաթեմատիկա՝*** ճանաչել որոշակի հատկություններով օժտված առարկաները (գույն, ձև, չափս, նյութ), մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում, չափումների կատարում, դետալների գծագրում: ***Երաժշտություն՝*** քննարկել թեմաներ, ունկնդրել, սովորել և կատարել երգեր, դերային խաղեր, պատրաստել երաժշտական բեմադրություններ: ***Տեխնոլոգիա՝*** նկարագրել/ներկայացնել կենցաղային պարզագույն առարկաների ձևավորման նպատակը, ցուցադրել ձևավորման նմուշօրինակներ: ***Ես և շրջակա աշխարհը՝*** բերել լույսի աղբյուրների օրինակներ՝ բնական և արհեստական:
Կապը ՀՊՁ -ի վերջնարդյունքների հետ
S7, S8, S10, S14, S16, S17, S18, S19, S22, S25, S26

՝

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ	
ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Արվեստի ստեղծագործություններն տարիքը, և դրանց ստեղծման պայմանները պատկերացնելու կարողությունների ձևավորում: Ստեղծագործությունների միջոցով տարբեր ժամանակներում ապրած մարդկանց կենցաղն ուսումնասիրելու կարողությունների	**1-2.Կ.Ս.ՆՄ.1.** Փորձարկել տարբեր նյութեր հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ, նաև՝ թափոններից: **1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևավորել բառապաշար:

ձևավորում:	**1-2.Կ.Ա.ՔԱ.1.** Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկերները դարձել նկար:
Ուղղորդող հարցադրում	**1-2.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել աշխատանքները՝ ըստ տեսակների:
Ի՞նչ միջոցներով է արվեստը ներկայացնում մարդկանց և նրանց շրջապատը: Ինչպե՞ս է արվեստը ներկայացնում իրականությունը: Կա՞ արդյոք արվեստ մեր շրջապատում:	**1-2.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: **1-2.Կ.Ա.Գ.1.** Գնահատել իր և ընկերների աշխատանքները: **1-2.Կ.Ս.ԱՏ.1.** Սեփական աշխատանքները ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումներով: **1-2.Կ.Ս.ԱՏ.2.** Վերլուծել, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչները:

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

- անվանել նյութերն ու գործիքները,
- կիրառել տեխնոլոգիական միջոցներ,
- նկարագրել արվեստի ստեղծագործությունները,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները՝ ըստ տեսածի և զգացածի,
- մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը
- նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Նորարարությունները, տեխնոլոգիաները և արվեստը: Արվեստի ստեղծագործություններում ներկայացված պատմությունները: Ինչի՞ մասին են պատմում թանգարանի հնագույն ցուցանմուշները: Ի՞նչ է պատկերված: Ի՞նչ է պատկերել արվեստագետը: Ո՞րն է ստեղծագործության արտահայտած իմաստը: Ինչո՞ւ են արվեստագետները ստեղծագործում:	Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը: Հետազոտել տարբեր ժամանակներում արվեստագետների աշխատելու միջոցները և հնարավորությունները: Համեմատել տարբեր ստեղծագործություններ: Գտնել նմանություններ և տարբերություններ օգտագործված նյութերի կամ աշխատանքի միջոցների մեջ: Կազմակերպել քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ. *- Ովքե՞ր են արվեստագետները:* *- Որտե՞ղ են ստեղծագործում:* *- Ի՞նչ գործիքներ են կիրառում:* *- Ի՞նչ գործեր են ստեղծում:* *- Որտե՞ղ կարելի է տեսնել ստեղծագործությունները:*	**Պատճառ և հետևանք** Պատկեր և ազդեցություն կապը. Ցուցադրության որակը տարբեր ընկալումներ է առաջացնում: **Օրինաչափություններ** Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: **Անհատական և մշակութային արժեհամակարգ** Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով

	Քննարկել տարբեր արվեստագետների աշխատանքները, թե ինչ են պատմում իրենց ժամանակների մասին: Քննարկել, թե ինչպես, ինչով և ինչու են ստեղծագործում արվեստագետները: Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում:	արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը:
Առաջարկվող թեմատիկա		
Հայկական մանրանկարչության, խեցեգործության, ճարտարապետության նմուշներ, խաչքար, խճանկար:		
Միջառարկայական կապ		
Մայրենի՝ մասնակցել խմբային աշխատանքների: Պատմել ապրածը, դիտածը, ընթերցածը, արտահայտել սեփական զգացումները, ցանկությունները: ***Մաթեմատիկա՝***ճանաչել որոշակի հատկություններով օժտված առարկաներ (գույն, ձև, չափս, նյութ), պատկերել մարմիններ, տարբեր առարկաներ, համեմատել և նկարագրել, կատարել չափումներ, գծագրել դետալներ: ***Երաժշտություն՝***քննարկել թեմաներ, ունկնդրել, սովորել և կատարել երգեր, դերային խաղեր, պատրաստել երաժշտական բեմադրություններ: ***Տեխնոլոգիա՝ն***կարագրել/ներկայացնել կենցաղային պարզագույն առարկաների ձևավորման նպատակը, ցուցադրել ձևավորման նմուշօրինակներ: ***Ես և շրջակա աշխարհը՝***թվարկել և տարբերակել դրական և բացասական հույզերը, հույզեր արտահայտող բառերը, դիմախաղերն ու այլ արտահայտչամիջոցները: ***Օտար լեզուներ՝***շատ պարզ բառերով և շատ կարճ նախադասություններով ներկայանալ ու ներկայացնել իր դասընկերներին:	
Կապը ՀՊՉ-ի վերջնարդյունքների հետ		
S4, S7, S11, S12, S14, S15, S16, S17, S18, S22, S25, S26, S27, S31, S32		

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ	
ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
Նկարն իբրև թեմատիկ-իմաստային միասնություն ընկալելու կարողությունների ձևավորում: Ինքն իրեն լսելու և միտքը ճիշտ կառուցելու կարողությունների զարգացում:	**1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: Ձևավորել բառապաշար: **1-2.Կ.Ա.ՔԱ.1.** Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկերները դարձել նկար:
Ուղղորդող հարցադրում	**1-2.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել աշխատանքները՝ ըստ տեսակների: **1-2.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: **1-2.Կ.Ա.ԱՊ.1.** Հայտնել կարծիք արվեստի տեսակների մասին: **1-2.Կ.Ա.ԱՊ.2.** Կարծիք հայտնել հայազգի արվեստագետների ստեղծագործու-թյունների մասին: **1-2.Կ.Կ.ԱԴ.3.** Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:
Ինչպե՞ս է արվեստը օգնում հասկանալու տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում ապրած մարդկանց կյանքը: Ինչպե՞ս են արվեստագետներն օգտագործում տարրերն ու սկզբունքներն իրենց աշխատանքներում:	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

- նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,
- անվանել նյութերն ու գործիքները,
- նկարագրել արվեստի ստեղծագործությունները,
- մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը,
- ներկայացել կարծիք, մեկնաբանել և վերլուծել՝ինչն է հավանում, ինչը՝ ոչ,
- խոսել արվեստի և ստեղծագործելու մասին,
- խմբավորել և մեկնաբանել ստեղծագործությունները՝ ըստ տեսակների,
- տարբերել անցյալում և ներկայում ստեղծված աշխատանքները,
- ճանաչել, տարբերել և գնահատել հայկական արվեստը ներկայացնող աշխատանքները,
- բացատրել, թե ինչու է արվեստը ժամանակից դուրս:

Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Կերպարվեստի և դիզայնի տարրերը ստեղծագործություններում: Կերպարվեստի տեսակները,	Դասակարգել ստեղծագործություններում հադիպող կերպարվեստի տարրերը և սկզբունքները (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես): Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում պատկերված ազգային ինքնություն արտահայտող առարկաները:	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և

ժանրերը: Հայկական կերպարվեստ: Հայ և համաշխարհային կերպարվեստ: Հայ արվեստագետների առանձին ստեղծագործություններ:	Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ ըստ ոճական առանձնահատկությունների: Որոշել, թե երբ են ստեղծվել դրանք: Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը: Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: Տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը: **Նկարագրել**- Ի՞նչ է պատկերված: **Վերլուծել** - Կերպարվեստի ո՞ր տարրերն են կիրառված: Ի՞նչ դեր են խաղում այդ տարրերը: **Մեկնաբանել** - Ի՞նչ է պատմում նկարիչը: Եթե ձայները փոխանցելու հնարավորություն լիներ, ի՞նչ ձայներ կլսվեին: **Քննարկել/Գնահատել** - Ի՞նչ է պակասում նկարում: Եթե այո, ապա ինչո՞ւ:	համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը: Գաղափարների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում: Միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում:
Առաջարկվող թեմատիկա		
Մարտիրոս Սարյան, Հակոբ Հովնաթանյան, Վարդգես Սուրենյանց: ***Վան Գոգի, Սեզանի և Սարյանի, Խանջյանի նատյուրմորտների համեմատություն:***		
Միջառարկայական կապ		
Մայրենի ՝մարդկանց, վայրերի, իրադարձությունների, առարկաների, երևույթների նկարագրություններ՝ հստակ արտահայտելով մտքերն ու զգացումները: ***Մաթեմատիկա*** ՝գտնել ծանոթ երկչափ պատկերներ երկրաչափական մարմինների մակերևույթների վրա: ***Երաժշտություն*** ՝ստեղծագործության բովանդակության, տպավորությունների ու զգացողությունների արտահայտում, ստեղծագործության տեսակը, բնույթը, տեմպը, դինամիկան ճանաչելու կարողություններ: ***Թատրոն***՝թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում: ***Ես և շրջակա աշխարհը***՝տարբերակել իր անցյալը, ներկան և ապագան, նկարագրել իրադարձությունները տարբեր ժամանակներում:		
Կապը ՀՊՉ -ի վերջնարդյունքների հետ		
S12, S16, S17, S18, S19, S24, S26, S27, S31, S32		

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ	
ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
Նպատակը	**Վերջնարդյունքներ**
«Արվեստն արտահայտում է իրականությունը» գաղափարի ընկալման կարողությունների ձևավորում: Մեր իրականության վրա արվեստի ազդեցության գիտակցության ձևավորում:	**1-2.Կ.Ս.ՆՄ.2.** Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: Ձևավորել բառապաշար: **1-2.Կ.Ա.ՔԱ.1.** Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկերները դարձել նկար: **1-2.Կ.Կ.ԱԴ.1.** Ներկայացնել, թե ինչով է արվեստի ստեղագործությունը նման կամ տարբեր իրականությունից: **1-2.Կ.Կ.ԱԴ.2.** Ներկայացնել մշակութային հաստատությունները՝ ըստ նշանակության: **1-2.Կ.Կ.ԱԴ.3.** Աշխատանքները կապել սեփական կենսափորձի հետ:
Ուղղորդող հարցադրում	
- Ի՞նչ է արտահատում արվեստը: -Ինչպե՞ս են ստեղծագործում արվեստագետները: - Ինչո՞ւ է դա կարևոր:	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

- նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,
- անվանել նյութերն ու գործիքները,
- նկարագրել արվեստի ստեղծագործությունները,
- մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը,
- ներկայացնել կարծիք, մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ,
- ընտրել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով,
- մեկնաբանել մշակութային հաստատություններում աշխատողների դերը և նշանակությունը:
- բացատրել, թե ինչու է արվեստը ժամանակից դուրս:

Բովանդակություն	**Առաջարկվող գործունեության ձևեր**	**Խաչվող հասկացություններ**
Արվեստ և իրականություն: Արվեստը մեր շրջապատում: Արվեստագիտական մասնագիտություններ:	Հետազոտել մեր իրականության մեջ արվեստի ներկայությունը: Քննարկել արվեստի դերը: Ուսումնասիրել արվեստագետների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և կարևորությունը: Ուսումնասիրել որևէ իրադարձություն ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին	**Ժամանակ և տարածություն** Ուսումնասիրել տարբեր մարդկանց պատմությունները, ստեղծագործությունները, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

	անդրադարձել է արվեստը: Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ:	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը:

Առաջարկվող թեմատիկա

Ծննդյան փարեդարձ, ազգային տոն, եկեղեցական տոն, Սուրբ Ծննդյան տոներ, Գիպության օր, Թարգմանչաց տոն:

Միջառարկայական կապ

Մայրենի ՝ մարդկանց, վայրերի, իրադարձությունների, առարկաների, երևույթների նկարագրություններ՝ հստակ արտահայտելով մտքերն ու զգացումները:

Մաթեմատիկա՝ գտնել ծանոթ երկչափ պատկերներ երկրաչափական մարմինների մակերևույթների վրա:

Երաժշտություն ՝ ստեղծագործության բովանդակության, տպավորությունների ու զգացողությունների արտահայտում, ստեղծագործության տեսակը, բնույթը, տեմպը, դինամիկան ճանաչելու կարողություններ:

Թատրոն ՝ թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում:

Ես և շրջակա աշխարհը՝ տարբերակել անցյալը, ներկան և ապագան, նկարագրել իրադարձությունները տարբեր ժամանակներում:

Օտար լեզուներ՝ ազգային, եկեղեցական, պետական տոներն այլ երկրներում:

Կապը ՀՊՁ -ի վերջնարդյունքների հետ

S12, S16, S17, S18, S19, S24, S26, S27, S31, S32

ԲԱԺԻՆ 2.

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչվող հասկացություններն առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Դրանք պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների ուսուցման ժամանակ:

Ընդհանրական հասկացությունների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է առարկայի առանձնահատկությամբ, սակայն վերոնշյալ խաչվող հասկացություններից ոչ բոլորն են պարտադիր ուսումնական տվյալ առարկայի շրջանակում: Դրանք հարկ է կիրառել՝ ըստ թեմայի նպատակահարմարության՝ հաշվի առնելով հաղորդվող թեմայի յուրահատկությունը:

Սակայն, որպես ընդհանուր պահանջ՝ հարկ է, որ բոլոր առարկաներում խաչվող հասկացություններն ընտրվեն ու կիրառվեն իրական կյանքի հետ համադրման համատեքստում:

Առարկայական ծրագրերում ներառված են տասներկու առանցքային գաղափարներ՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք
- Մասշտաբ, համամասնություն, քանակ
- Կառուցվածք և գործառույթ
- Համակարգ և մոդել
- Էներգիա, նյութ
- Կայունություն և փոփոխություն
- Զարգացում
- Անհատ և հարաբերություններ
- Ժամանակ և տարածություն
- Անհատական և մշակութային արժեհամակարգ
- Համաշխարհայնացում

Հասկացություն	Նկարագրություն	Օգնող հարցեր
Օրինաչափություն	➢ երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվածություններ ➢ որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ հասարակության մեջ ➢ մարդու գիտակցությունից դուրս և նրանից անկախ բնության ու հասարակության մեջ տեղի ունեցող օբյեկտիվ գործընթացների արտացոլում ճանաչողության մեջ և գիտելիքների որևէ բնագավառում ➢ որևէ երևույթի պատմական զարգացման մեջ դրսևորվող (դրսևորված) օրենք և դրա	Ի՞նչ եք նկատում: Ի՞նչն է օրինաչափ:

	հետևանքը՝ արդյունքը	
Պատճառ և հետևանք	➢ յուրաքանչյուր երևույթի անհրաժեշտաբար մեկ այլ երևույթի նախորդումը ➢ պատճառահետևանքային փոխազդեցություններ ➢ պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար	«Ինչպե՞ս տեղի ունեցավ», «Ինչո՞ւ տեղի ունեցավ» «Ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա», «Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ»:
Մասշտաբ, համամասնություն, քանակ	➢ մասշտաբը որևէ բանի հարաբերական մեծություն է, չափանիշ, չափի աստիճան ➢ համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին կօգնի հասկանալ իր կատարած աշխատանքի ծավալը՝ հարկ եղած դեպքերում՝ համեմատություններ, վերլուծություններ կատարել	«Ի՞նչ է, ի՞նչ չափով է, ինչպե՞ս է փոփոխվել ժամանակի ընթացքում:
Կառուցվածք և գործառույթ	➢ «Կառուցվածք» հասկացությունը տարրերի միջև եղած համակարգաստեղծ, օրինաչափ կապերի ու հարաբերությունների ամբողջություն է: ➢ Կառուցվածքայնությունը բնութագրվում է նաև կազմակերպվածությամբ և ինքնակազմակերպվածությամբ: ➢ Կառուցվածքը միևնույն խմբին կամ դասին պատկանող օբյեկտների բազմություն է՝ դրանց հատուկ գոյության ու գործառնության համընդհանուր սկզբունքներով: ➢ Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ:	Ի՞նչ է, ինչի՞ համար է, ինչպե՞ս են փոխկապակցված:
Համակարգ և մոդել	➢ Համակարգը միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն է, որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն: ➢ Համակարգի միջոցով սովորողն ունենում է ընդհանրական պատկերացում՝ նմանություններ ունեցող երևույթների մասին: ➢ Մոդելները համակարգի պարզեցված տարբերակներն են: Համակարգը՝ որպես օբյեկտ, հանդես է գալիս միայն իր տարրերով և դրանց անկրկնելի ու եզակի փոխազդեցությամբ: ➢ Յուրաքանչյուր համակարգ օժտված է կառուցվածքայնությամբ և բաղկացած է կոնկ-	Ինչպիսի՞ն է համակարգը. միասնական, թե՞ տրոհվող: Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: Ինչպե՞ս են փոխկապակցված համակարգն ու մոդելը:

	ռետ քանակությամբ տարրերից: ➢ Համակարգին հատուկ է որոշակի կայունություն և հարաբերական ինքնուրույնություն, որով հանդես է գալիս ավելի մեծ համակարգի շրջանակում՝ ենթահամակարգի կարգավիճակով:	
Էներգիա, նյութ	➢ Այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շրջապատում, **նյութ է՝** կենդանի կամ անկենդան: ➢ Կենդանի նյութերը մշտապես ինքնանորոգ վում են, իսկ անկենդանները միայն փոփոխվում են արտաքին ուժի ազդեցությամբ: ➢ Մեր շուրջբոլորը նյութ է կամ էներգիա: ➢ Էներգիան նյյութի հիմնական հատկություններից մեկն է, նրա շարժման չափը, շարժման հզորությունը՝ ուժը (ջերմության, լույսի, էլեկտրականության, մեխանիկական շարժման ձևով):	Ի՞նչ է նյութը, քանի՞ տեսակ է լինում: Ի՞նչ է էներգիան և ի՞նչ կապի մեջ է նյութի հետ:
Կայունություն և փոփոխություն	➢ Կայունությունն ու փոփոխությունը բոլոր համակարգերի բնութագրիչներն են: Համակարգերը կայուն են, երբ բոլոր մուտքերն ու ելքերը հավասարակշռված են, որպեսզի ներքին գործընթացները կարողանան շարունակվել կայուն վիճակում: ➢ Փոփոխություն՝ տեղի է ունենում, երբ մուտքերն ու ելքերը հավասարակշռված չեն, այդ դեպքում առաջանում է կայունության փոփոխություն: ➢ Փոփոխությունը կարող է գրանցել առաջընթաց կամ հետընթաց:	
Զարգացում	➢ Զարգացումը շարժման բարձրագույն տեսակ է, բնորոշվում է պարզից բարդ օրինաչափ անցումով: ➢ Զարգացումը այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական նոր առաջադիմական վիճակ:	Ի՞նչ է զարգացումը: Արդյո՞ք ամեն փոփոխություն զարգացում է:
Անհատ և հարաբերություններ	➢ Անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում: ➢ Անհատն այն մարդն է, որը բնութագրվում է տարբերիչ, միայն իրեն հատուկ հատկանիշների համալի րով, ում մեջ զարգացած է անհատականությունը, ինքնուրույն, կատարելության հասած մարդն է, որը ակտիվորեն	Ո՞վ եմ ես, ո՞վ ենք մենք Ո՞վ է պատմական ան-

	ճանաչում և վերափոխում է իրականությունը, իր ուրույն ներդրումն ունի հասարակության զարգացման առաջընթացում, հաջողությամբ դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում:	հատը, ո՞րն է նրա բնութագիրը:
Ժամանակ և տարածություն	➢ Տարածությունն ու ժամանակը որպես գոյության հիմնական բնութագրիչներ: ➢ Գոյությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է «մոտենալ» տարածությանը և ժամանակին/ տարբեր մարդկանց կենցաղ, նրանց պատմություններ, ճանապարհորդություններ, մարդկության պատմության շրջադարձային կետեր, հայտնագործություններ, գյուտեր, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:	Որտե՞ղ և ե՞րբ:
Անհատական և մշակութային արժեհամակարգ	➢ Գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում ➢ Միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում ➢ Ստեղծարարություն	Ի՞նչ է ստեղծարարությունը: Ինչպե՞ս է մարդը դառնում ստեղծարար: Որո՞նք են մշակույթն արժևորող ուղիները: Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյանքում:
Համաշխարհայնացում	➢ տնտեսական, քաղաքական, մշակութային համաշխարհային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց, ➢ մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերություններ, հնարավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:	Ինչպե՞ս է աշխարհում ամեն ինչ կապակցված: Որո՞նք են համաշխարհայնացման առավելությունները ու մարտահրավերները:

ԲԱԺԻՆ 3

«Կերպարվեստ-2» դասագրքի կառուցվածքը, կազմման սկզբունքներն ու առանձնահատկությունները

Արվեստն աշխարհը ճանաչելու և հասկանալու յուրօրինակ միջոց է:

Այն սովորողներին նպատակաուղղում է հաճելիորեն ուսումնասիրե իրենց շրջապատող աշխարհը, ընդլայնել մտահորիզոնը՝ ձևավորելով աշխարհայացք:

Յուրաքանչյուր աշակերտ ունի իմացական կարողությունների տարբեր մակարդակ, ինքնարտահայտման, ինքնադրսևորման տարբեր ձևեր ու մոտեցումներ, որոնք նա առօրյա կյանքում կարիք ունի փորձարկել և լիարժեք զարգացնել:

Կերպարվեստի դերն այս առումով շոշափելի է, քանի որ այն սովորողին հնարավորություն է տալիս իր ներաշխարհը վերաիմաստավորելու և զգացողություններն արտահայտելու:

Ուսումնառության ընթացքում նկարելը, կառուցելը, երևակայելը միավորում են սովորողների փորձի տարբեր տարրեր՝ զարգացնելով միանգամայն նոր փորձ: Տեսողական պատկերների ըմբռնումը սովորողի համար ուսուցման լրացուցիչ ուղիներ է բացում և նրան հնարավորություն է տալիս արձանագրել իրական կամ երևակայական գաղափարները, հույզերն ու զգացումները: Իրենց միջավայրում տեսողական տարրերը ուսումնասիրելու հնարավորություններն օգնում են սովորողին գնահատել իրերի բնույթը և ուղղորդել բնական հետաքրքրասիրությունը՝ կրթական նպատակներով: Վստահությունն ու հաճույքը, որոնք բխում են նպատակաուղղված կերպարվեստի գործունեությունից, կարող են դրական ազդեցություն ունենալ սովորողի ուսուցման վրա նաև ուսումնական ծրագրի այլ բաժիններում:

«Կերպարվեստ -2» դասագիրքը վերոնշյալ նկատառումներով է ստեղծվել՝ բովանդակությունը նպատակաուղղելով սովորողի մշակութային, անձնային և ճանաչողական և այլ կարողունակությունների զարգացմանը:

«Կերպարվեստ-2» դասագրքի հիմքում տասներկուամյա հանրակրթական ուսումնական հաստատության 1-2-րդ դասարանների «Կերպարվեստ» առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներն են:

Գիտենք՝ առարկայական ծրագիրը կազմվում է ուսուցչի, իսկ դասագիրքը՝ սովորողի համար: Հետևաբար, դասագրքի կազմման հարցում բացառապես առաջնորդվել ենք սովորողների տարիքային առանձնահատկությունների, հետաքրքրությունների և նախասիրությունների հաշվառմամբ:

Դասագրքի նպատակն է 12-ամյա միջնակարգ կրթության շրջանակներում և այլընտրանքային հայեցակարգերով գործող դպրոցների առկայության պայմաններում ապահովել արվեստի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ ուսուցում, հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված կարողունակություններին համապատասխան՝ ուսումնական միատեսակ վերջնական արդյունք՝ սովորողների՝ ստեղծագործական գաղափարների մշակման, հաղորդման, ստեղծագործական գործունեության, արվեստի ստեղծագործություններին գրագետ արձագանքելու և դրանք իմաստավորելու միջոցով:

Հիմքում ընկած են հետևյալ հիմնական սկզբունքները.

1. գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության անհրաժեշտություն բոլոր սովորողների համար,

2 .գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության լավագույն ավանդույթների պահպանում և արդիականացում,
3. յուրաքանչյուր աշակերտի համար մատչելիության և հասանելիության ապահովում,
4.սովորողների ակտիվ և ազատ ստեղծագործական գործունեության խրախուսում,
5. դասընթացի ուսումնասիրման ընթացքում «գիտելիքի ձեռքբերում-գործնական կիրառում-արժեքային համակարգի և վերաբերմունքի ձևավորում» շղթայի անքակտելիության ապահովում:

Դասագիրքն ընդգրկում է երկու հիմնական բաժին՝ ստեղծագործական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում: Մասնավորապես՝

Գեղարվեստական գործունեություն՝ գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն /դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ:

Գաղափարների հավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների և միջոցների ուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ:

Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների ուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում: Թեմատիկ պատկերում. իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներով սովորողների տպավորությունների իրատեսական, վերացական, երևակայական (2D, 3D) հաղորդում: Ստեղծագործական աշխատանքների վերանայում, ավարտ և ցուցադրություն:

Արվեստի միջոցով իրականության ընկալում՝ ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննարկում, գնահատում և արժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրություն:

Արվեստագետների դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրություն: Տեխնոլոգիական նորարարությունների դերն արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ: Արվեստի ուսումնասիրումը և մյուս առարկայական բնագավառները: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ:

«Կերպարվեստ-2» դասագրքում առարկայական ծրագրի ուսումնական նյութը ներկայացվում է մոդուլներով, որոնք հիմնական հասկացությունների ու գաղափարների միջոցով գիտելիքների դասդասման և խմբավորման, ինչպես նաև հմտությունների և արժեքների ձևավորման ուղենիշ և հիմք են դառնում: Մասնավորապես՝

– **ՍՏԵՂԾՈՒՄ՝**

մոդուլ 1՝ նյութեր, միջոցներ
մոդուլ 2՝ կերպարվեստի տարրեր և դիզայնի սկզբունքներ
մոդուլ 3՝ ՝նորարարություն և երևակայություն

– **ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

մոդուլ 4՝ վերանայում և ցուցադրում,

- **ԱՐԺԱԳԱՆՔՈՒՄ**

մոդուլ 5՝ քննադատական արձագանք

– **ԿԱՊԱԿՑՈՒՄ**

մոդուլ 6՝ արվեստ, տեխնոլոգիաներ, գյուտեր,
մոդուլ 7 ՝ արվեստի պատմություն,

մոդուլ 8 ՝ արվեստի դերն ու նշանակությունը:

Ներկայացված ութ մոդուլներն ամբողջական և ավարտուն միավորներ են՝ իրենց ընդհանուր նպատակով, սակայն զետեղված կոնկրետ նյութով, առաջադրանքներով դրանք ամենևին չեն նույնանում, միմյանց շարունակությունը չեն, միմյանց չեն լրացնում: Սա ենթադրում է, որ դասագիրքը սովորողի համար նորի բացահայտում է՝ հետաքրքիր, բազմաբնույթ աշխատանքներով, բավականին մոտիվացնող է և «Կերպարվեստ» առարկայի յուրաքանչյուր դասի ընթացքում ապահովելու է ստեղծագործական աշխույժ մթնոլորտ՝ աննկատելիորեն մղելով սովորողներին ինքնուրույն գործունեության, ինքնադրսևորման և ինքնարտահայտման:

Հանրակրթության պետական չափորոշիչն իր ռազմավարական նոր մոտեցումների շրջանակում բարձր պահանջներ է դնում դասագրքերի առջև՝ որպես կարողունակություններ ձևավորող և արժեքներ փոխանցող լավագույն միջոցի:

«Կերպարվեստ-2» դասագրքի հիմքում ևս, որպես արդիական պահանջ, ընկած է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը՝ վերջնարդյունքների և սովորողի բազմակողմանի և ամբողջական ուսումնառության ապահովմամբ: Կարողունակությունները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար: Վերջնարդյունքը ոչ թե տվյալ առարկայի հաջող յուրացումն է, այլ կարողունակությունների ձևավորումը:

Ուստի, «Կերպարվեստ-2» դասագրքով աշխատելիս պետք է առաջնորդվել ուսումնական գործընթացում սովորողի մեջ այնպիսի որակների ձևավորման պահանջով, որոնք պետք կգան նրան և՛ իր առօրյա գործունեությունը կազմակերպելիս, և՛ ամբողջ կյանքի համար: Այդ նպատակին են ուղղված բազմաթիվ առաջադրանքներ, որոնք սովորողի առօրյայից են, բխում են նրանց կենսափորձից՝ ձևավորելով տարբեր կարողունակություններ:

«Կերպարվեստ-2» դասագրքով աշխատող ուսուցիչները դասարանում պետք է ապահովեն բաց միջավայր, որտեղ սովորողները ազատ գործունեություն ծավալեն, չվախենան սխալներ թույլ տալուց, փորձարկեն տարբեր նյութեր, միջոցներ ստեղծագործական բազմազան աշխատանքներ կատարելու համար, համագործակցեն ընկերների հետ, ուսուցչի հետ քննարկեն բազմաբնույթ հարցեր, գան ինչ-որ եզրահանգման, վերլուծություն կատարեն՝ հետագա աշխատանքներն ավելի բարելավելու, թերությունները վերացնելու համար:

Դասագրքի յուրաքանչյուր էջում զետեղված են ***նախագծային աշխատանքներ,*** որոնք սովորողը կարող է կատարել և՛ տանը, և՛ դպրոցում՝ պայմանավորված աշխատանքի առաջնահերթությամբ: Դրանք փոքրիկ, պարզ հետազոտություններ են, որոնց հաղթահարումը կենտրոնացած, համակարգված և մանրակրկիտ աշխատանք է պահանջում՝ զարգացնելով նրանց քայլաշարային մտածողությունը:

Յուրաքանչյուր նախագծային աշխատանք կատարելուց առաջ, ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչ պետք է անեն սովորողները, ինչպես պետք է այդ գործը կատարեն և ինչ հաջորդականությամբ, ապա նույնպիսի բանավոր բացատրություն կամ հիմնավորում պահանջի նաև սովորողից, որպեսզի հավատացած լինի, որ նրանք պատկերացնում են իրենց անելիքը և ճիշտ կկատարեն տրված առաջադրանքը:

Դասագրքի յուրաքանչյուր էջում զետեղված են նկարազարդումներ, (բնանկարներ, գծանկարներ, դիմանկարներ, վերացական, իրատեսական, երևակայական պատկերներ),

որոնք բխում են ծրագրային նյութից և դրանց շուրջ իրականացվող աշխատանքները ևս հանգեցնում են սահմանված վերջնարդյունքներին:

Նախ պետք է սովորեցնել մանրամասնորեն դիտել պատկերները՝ տեսնել դրանց մեջ օրինաչափություններ, փորձեն տեսնել նաև այն, ինչը փաստացի պատկերված չէ, սակայն ուսումնասիրվող հարակից առարկաներում հանդիպել են, կամ դրանք բնորոշ են ու բնութագրական առօրյա կյանքին, դրան առնչվող երևույթներին:

Այս համատեքստում բավականին տեղին կարելի է դիտարկել **խաչվող հասկացությունները,** քանի որ դրանք դասագրքում ակնառուացված չեն, սակայն ենթադրվում են **«Եկե՛ք քննարկենք»** հարցադրումների ներքո:

Նկարների դիտման արդյունավետությունն ապահովելու համար կարող ենք փոքրիկ զրույց անցկացնել, որի նպատակը սովորողների աշխատանքին որոշակի ուղղվածության հաղորդումը և առաջադրված պատկերի ճիշտ և բազմակողմանիորեն ըմբռնելու անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետք է լինի:

Ուշադրություն պետք է դարձնել, որ սովորողները ոչ միայն ուղղակի պատկերեն կամ ստեղծեն որևէ աշխատանք, այլև կարողանան այն ներկայացնել՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար. ի՞նչ նյութերն են օգտագործել, կերպարվեստի ո՞ր տարրերն են կիրարկել, ի՞նչ նորարարություն կա իր աշխատանքում, ինչո՞ւ է հենց այդ առարկան պատկերել, ինչո՞ւ է ցուցադրության համար ընտրել այդ աշխատանքը և այլն: Օրինակ՝ «Ցուցադրություն» և «Քննադատական արձագանք» բաժիններում նախատեսվում է իրականացնել վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ:

Մասնագիտական բառապաշար ձևավորելու նպատակով դասագրքի էջերում սովորողը համապատասխան խորհրդանիշի ներքո հանդիպում է հասկացությունների, որոնք գործածված են կերպարվեստի տեսանկյունից և մատչելի բացատրված են: Այսօրինակ բառերի հիմնական դերը վերջին հաշվով յուրացրած բառերի առավելագույն ակտիվացումն է. խոսքում դրանց ճիշտ և տեղին գործածումը:

Մոդուլների ավարտից հետո կազմակերպվում է ամփոփիչ դասեր, որոնք իրենց բովանդակությամբ և կառուցվածքով ոչ ստանդարտ բնույթ պիտի կրեն: Այս դասերը սովորողի համար տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի դրսևորման յուրօրինակ հնարավորություն են:

Ամփոփման դասերին սովորողները պետք է վերհիշեն, երևակայեն, ստեղծագործեն, նկարեն, գծեն, համեմատություններ և հակադրություններ կատարեն, դրանց հիման վրա ձևակերպեն եզրակացություններ, դատողություններ, հարստացնեն իրենց գիտելիքները, կարողությունները, բառապաշարը՝ նոր սովորած եզրույթներով, անցած նյութերի մեջ մեկ անգամ ևս հայտնաբերեն այն նորն ու հետաքրքիրը, որոնք չէին նկատել, զգացել, ըմբռնել ընթացիկ դասերի ժամանակ:

Ամփոփումն իրականացվում է հարց-առաջադրանքների միջոցով, որոնք համակարգող-ընդհանրացնող բնույթ ունեն: Դրանք որպես վերջնարդյունքներ ձևակերպված են նաև հանրակրթության պետական, առարկայական չափորոշիչներում և «Կերպարվեստ -2» առարկայական ծրագրում (տե՛ս 64-րդ էջ):

Դասագրքի վերջին էջում ուսումնասիրված եզրույթներն ու դրանց բացատրություններն ամփոփ ձևով ներկայացված են (տե՛ս էջ 62-րդ):

Դասագրքի էջը բազմապիսի աշխատանքներ կատարելու հնարավորություններ է ստեղծում, և այդ ամենն ուսուցիչը պետք է շատ լավ պատկերացնի, որպեսզի սովորողին հասցնի սահմանված վերջնարդյունքին/ներ/, նպաստի նրանց խոսքի, մտածողության, բարոյական որակների և մարդ-քաղաքացու ձևավորմանը: Այս առումով դասագիրքը ևս անմասն չի մնացել, քանի որ ընդգրկել է նաև բարեվարքությանն ու բարեկրթությանն ուղղված կանոններ (տե՛ս էջեր՝ 41-րդ, 58-րդ):

Դասագրքում զետեղված առաջադրանքները կարելի է իրականացնել ուսումնական գործունեության բազմաբնույթ ձևերով՝ առավել հետաքրքիր դարձնելով «Կերպարվեստ -2» դասագրքով աշխատելը:

Ստորև ներկայացնենք ուսումնական գործունեության ձևերը՝

1) արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, երաժշտության ունկնդրում, կերպարվեստի ստեղծագործությունների դիտում: Հանդիպումներ արվեստագետների հետ,
2) բանավեճեր, քննարկումներ, ինքնավերլուծություն, զրույցներ,
3) ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր, մրցույթներ, հանդեսներ, ցուցադրություններ և ներկայացումներ,
4) նյութերի, միջոցների և տարբեր մոտեցումների փորձարկումներ,
5) հետազոտություններ, տարբեր լրատվամիջոցների և տեղեկատվության աղբյուրների ուսումնասիրում,
6) անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ և նախագծեր,
7) ներկայացումներ և մոդելավորումներ, գծապատկերների և սխեմաների ստեղծում, ուսուցողական և գեղարվեստական ֆիլմերի դիտումներ, քննարկում,
8) մասնագիտական եզրույթների, արվեստագիտական բառապաշարի և լեզվի գործածում, գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում,
9) տեղեկույթ ու փաստարկներ որոնելու նպատակով մեդիագրագիտության հմտությունների կիրառում, համապատասխան տեղեկատվության և ուսումնասիրման նյութի տեղեկացված ընտրություն,
10) աշխատանքային թերթիկներ և ռուբրիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով, թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ:

Էջերում կարելի է հանդիպել նաև բանաստեղծությունների, հանելուկների, որոնք սովորողը պետք է ներկայացնի պատկերներով, նկարաշարերով և այլն: Միջառարկայական կապի շնորհիվ սովորողն ավելի դյուրին է ընդգրկվում ուսումնական գործընթացի մեջ՝ տաբուներ չտեսնելով իր ուսումնասիրած առարկաների միջև:

Կարևոր է ոչ միայն «Կերպարվեստ» առարկայի ծրագրային նյութի յուրացումը, այլև այդ գիտելիքը զարգացնելը, աճեցնելը, ստեղծագործաբար կիրառելը, չափելի և կոնկրետ վերջնարդյունքներ գրանցելը: Այսինքն՝ նյութը ոչ թե մեկ դասաժամի համար է նախատեսված, այլ՝ վերջնարդյունքը գրանցելուն է միտված:

Դասագրքում յուրաքանչյուր մոդուլն ուսումնասիրելուց առաջ ներկայացվում են մոդուլի ավարտին սովորողից անկալվող վերջնարդյունքները: Սա հնարավորություն է տալիս սովորողին ավելի մոտիվացվելու՝ հստակ պատկերացնելով իր քայլերը՝ ցանկալի արդյունքին/ներ/ հասնելու համար:

Օրինակ՝ **«Կապակցում»** մոդուլն ուսումնասիրելիս սովորողն այդ էջում կարդում է, թե ինչ է իրենից պահանջվում, մասնավորապես,
«Ներկայացրո՛ւ սեփական աշխատանքները նորովի,
Վերլուծի՛ր, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչը, քանդակագործն ու ճարտա ռապետը»:

Վերոնշյալ վերջնարդյունքներն կապվում են հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված համապատասխան վերջնարդյունքի հետ:

Օրինակ՝ «Ներկայացնել մշակութային հաստատությունները՝ ըստ նշանակության» ծրագրային վերջնարդյունքն իր տրամաբանական ընդգրկումն ունի «ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին» վերջնարդյունքի հետ (տե՛ս «Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները»):

Կարծում ենք՝ «Կերպարվեստ-2» դասագիրքը հնարավորություն կտա ուսուցչին «Կերպարվեստ» առարկայի յուրաքանչյուր դասի ընթացքում ապահովել ստեղծագործական միջավայր, ստեղծել մանկավարժական բարենպաստ պայմաններ՝ սովորողների գեղագի-տական դաստիարակություն տալու, ստեղծագորելուն մղելու և արվեստի հետ հաղորդակցելու համար:

ԲԱԺԻՆ 4. «Կերպարվեստ-2» դասագրքի նյութերի համար հանձնարարելի թեմատիկ պլանավորում

Ցանկացած աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է դրա նախապես պլանավորմամբ, որպեսզի գործողությունների քայլերի հաջորդականությունը, դրանց կապերն ու անցումներն ապահովվեն, որպեսզի աշխատանքը դառնա նպատակային և արդյունավետ: Ուստի, ուսումնական աշխատանքը ևս պետք է պլանավորել՝ ձախողումները հնարավորինս բացառելու համար:
Այս պլանավորումը նախնական է, քանի որ այն ամբողջ տարվա ծրագրային նյութի բաշխումն է ժամանակի մեջ, և թեմատիկ պլանը հիմնավորված ու գրագետ կազմելու առաջին նախապայմանը՝ առարկայի, կոնկրետ դեպքում՝ «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչն ու ծրագիրն ուսումնասիրելն է: Չնայած այն հանգամանքին, որ թեմատիկ պլանում ակնառու չի երևում առարկայական չափորոշչի այս կամ այն պահանջը, սակայն դրանք ներթաքուն ձևով արտացոլված են առարկայական վերջնարդյունքներում, որոնք անմիջականորեն կապ ունեն առարկայական ծրագրի բովանդակության և ծրագրային ծածկագրված վերջնարդյունքների հետ:
Թեմատիկ պլանում ընդգրկված է «Կերպարվեստ-2» դասագրքի ծրագրային նյութն՝ առանց ժամաքանակի: Այս հարցում ուսուցչին տրված է ազատություն: Նա ինքն է որոշում՝ որ նյութին քանի ժամ հատկացնել՝ իր առջև որպես նպատակ ունենալով առարկայական չափորոշչով և ծրագրով սահմանված վերջնարդյունքների ապահովումը:
Թեմատիկ պլանի **առաջին սյունակում** ներկայացված է ուսումնասիրվելիք նյութի հիմնական բովանդակությունը:
Երկրորդ սյունակում՝ թեմայի վերջնարդյունքներն են:
Երրորդ սյունակում՝ նյութի վրա տարվող ուսումնական գործունեության ձևերը:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
1-2-ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Ուսուցանող նյութը	Ակնկալվող վերջնարդյունքներ	Ուսումնական գործութեություն
Իմ սիրելի խաղալիքը ***Նվեր ամենահոգատարին,*** ***Օգնենք տանը կամ դպրոցին*** ***Խաղում եմ ընկերներիս հետ,*** ***Տնակ կենդանիների համար,*** ***Անձրևոտ օր*** ***Փողոցում*** ***Սփռոց*** ***Խորհրդանիշներ*** ***Բնության ձայներ*** ***Այգի***	• Ստանալ ծավալային պատկերներ: • Փորձարկել նյութերը և գործիքները: • Միավորել և առանձնացնել նյութերը: • Հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները: • Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: • Անվանել նյութերն ու գործիքները: • Պատմել իր և ընկերների աշխատանքների մասին: • Անվանել գույները: • Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: • Արտահայտել մտքեր ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ, եզրագծերով, տոներով և գունային երանգներով: • Ստեղծել պարզ նախշեր: • Բնօրինակից ստանալ վերացական պատկերներ: • Ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով՝ կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն: • Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ: • Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: Ներկայացնել կարծիք:	**ՆՅՈՒԹԵՐ ՄԻՋՈՑՆԵՐ** Վարժություններ տարբեր որակների և գույների թղթերի վրա: Նկարչական միջոցների փորձարկում՝ մատիտներ, յուղամատիտներ, մարկերներ, վրձիններ, ներկեր: Աշխատանքներ կավով կամ ծեփոնով: Գծանկարչական և գեղանկարչական նյութերի փորձարկում: Դիտում և ուսումնասիրում: Վերացական հորինվածքների ստեղծում բնական մոտիվների հիման վրա /2D, 3D: Կազմման տարբերակներ՝ միմյանց և թղթի կենտրոնի նկատմամբ պատկերների սիմետրիկ և ոչ սիմետրիկ տեղաբաշխմամբ. Անվանել աշխատանքները, քննարկել և մեկնաբանել աշխատանքի ընթացքը:
Ես և իմ անունը ***Իմ ընտանիքը***	• Ստանալ ծավալային պատկերներ:	**ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

Ես աշակերտ եմ ***Անցյալ, ներկա և ապագա*** ***Օրվա ռեժիմ*** ***Չափումներ*** ***Այբուբեն*** ***Մուլտֆիլմերի սիրելի հերոսներ***	• Փորձարկել նյութերը և գործիքները: • Միավորել և առանձնացնել նյութերը: • Հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները: • Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: • Անվանել նյութերն ու գործիքները: • Պատմել իր և ընկերների աշխատանք: • Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ստանալ ճանաչելի պատկերներ և հորինվածքներ: • Կիրառել հիմնական և բաղադրյալ գույները և ստանալ նոր գույներ: Աշխատանքներում պահպանել համաչափությունը: • Աշխատանքներում արտահայտել սեփական կյանքի փորձը և գիտելիքները: • Ստեղծել պարզ նախշեր: • Բնօրինակից ստանալ վերացական պատկերներ: • Ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով՝ կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն: • Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ:	Վարժություններ գույներով և գուներանգներով: Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծում: Միայն գծի միջոցով պարզ պատկերների, ձևերի և առարկաների պատկերում: Բնապատկերի կատարում գծի միջոցով: Շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություն-ներում և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկեր-ների տեսակների բացահայտում: Տարբեր նյութերով և միջոցներով երկրաչափական, բուսական և կենդանական ձևերի պատկերում: Նախշերի կատարում, կիրառական արվեստի նմուշների պատկերազարդում, շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում: Պարզ պատկերների, ձևերի և առարկաների պատկերում և գունավորում: Պարզ երկրաչափական, բուսական կամ կենդանական պատկերների միջոցով կոլաժների պատրասում: Խճանկար: Ուրվապատկերների, նշանների, նախշերի և խորհրդանիշների պատկերում կամ պատրաստում (2D, 3D): Պարզ երկրաչափական, բուսական կամ ազատ ձևերի միջոցով բնապատկերի, դիմանկարի կամ նատյուրմորտի կատարում:
Հեքիաթի ձևավորում ***Երեք խոզուկների հեքիաթը***	• Ստանալ ծավալային պատկերներ: • Փորձարկել նյութերը և	**ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ** Համաչափության, գծերի

Սևուկ ուլիկը ***Ծիրը*** ***Գայլն ու գառը*** ***Սուտլիկ որսկանը*** ***Պոչատ աղվեսը*** ***Շունն ու կատուն*** ***Կենդանիներ*** ***Մուլտֆիլմերի հերոսներ*** ***Գիշեր-ցերեկ*** ***Տիկնիկային ներկայացման ձևավորում***	գործիքները: • Միավորել և առանձնացնել նյութերը: • Հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները: • Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: • Արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ, եզրագծերով, տոներով և գունային երանգներով: • Ստեղծել պարզ նախշեր: • Բնօրինակից ստանալ վերացական պատկերներ: • Ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով՝ կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն: • Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ: • Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: Ներկայացնել կարծիք:	ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ: Դիմագծերի ընդհանրացման և նմանության կարողությունների ձևավորում: Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում: Թեմատիկ նկարչություն դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով: Առարկաների պատկերում (ավարտված) ճեպանկար, բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: Ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերի ստեղծում (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա) առանց նախօրոք մատիտով արված նկարի: Կենդանիների, թռչունների և մարդու մարմնի պատկերում: Նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում: Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում): Աշխատանքային միջավայրը նաև դասասենյակն է, սեղանը,

		այն պարագաները, որոնցով ստեղծագործում են: Աշխատանքային գործիքների՝ իրենց սեղանի, սեղանի վրա գրիչների ու մատիտների պատկերում:
Իմ քաղաքը ***Իմ գյուղը*** ***Մեր լեռներն ու լճերը*** ***Արհեստներ*** ***Հեքիաթ, Հայկական գորգ*** ***Դիմակահանդես***	• Անվանել նյութերն ու գործիքները: • Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: • Ստեղծել աշխատանքային տետր և պորֆոլիո: • Գաղափարներն արտահայտելիս կիրառել խորհրդանշաններ: • Տեսակավորել և խմբավորել աշխատանքներ՝ ըստ առաջարկված չափանիշների: • Առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ: • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները: • Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: • Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: • Ներկայացնել կարծիք; • Բացատրել, թե ինչու է արվեստը ժամանակից դուրս:	**ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ** Ստեղծել աշխատանքային տետր կամ թղթապանակ: Անհատական կամ խմբով առանձնացնել աշխատանքներն՝ ըստ առաջարկված չափանիշ-ների: Ձևակերպել հարցերը և պա-տասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք պատ-րաստվեն աշխատանքները ցուցադրության համար: Մեկնաբանել, ստեղծագործու-թյուններից ստացած տպավորու-թյունները: Բացատրել. թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները: Նշել և մեկաբանել ցուցադրության կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները: Մեկնաբանել սեփական աշխա-տանքները: Աշխատել խմբով: Սովորողների կողմից կատար-ված աշխատանքների, կամ թե-մատիկ առանձին ուղղվածու-թյուն պարունակող ստեղծա-գործությունների և առարկաների ցուցադրություն: Դասընթացների այս ձևը կարող է կազմակերպվել որևէ առար-կայի հետ ինտեգրված:
	• Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: • Վերլուծել արվեստի ստեղծագործություններն՝ ըստ	**ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ** Տարբեր ստեղծագործություն-ների վերաբերյալ կարծիքների արտահայտում՝ հարց ու պատա-սխանի, ռուբրիկների միջոցով:

	տեսածի և զգացածի: • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները: • Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: • Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: • Ներկայացնել կարծիք: • Դասակարգել աշխատանքները, հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները: • Աշխատանքները գնահատել՝ ըստ արտահայտչականության, գրագիտության, հիմնական գաղափարի փոխանցման: • Համեմատել ընկերների աշխատանքները: • Ընտրել շրջապատող իրականությունը արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ: • Հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով:	Համեմատել՝ -միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքներ: -նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխատանքներ: -միևնույն ժանրի ստեղծագործություններ: Քննարկել, վերլուծել, դասակարգել և գնահատել արվեստի ստեղծագործությունները: Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ: **Նկարագրել**- Ի՞նչ է պատկերված: **Ներկայացնել** - Արվեստի ո՞ր տեսակին է պատկանում աշխատանքը: **Վերլուծել**-Ի՞նչ պատկերներ են կիրառված: Ի՞նչ նպատակով են օգտագործված հենց այդ պատկերները: **Մեկնաբանել**-Ինչի՞ մասին է պատմում ստեղծագործությունը: **Քննարկել** - Աշխատանքը հաջողված է, թե՝ ոչ: Այս աշխատանքներից, ո՞րը կարելի է ձեռք բերել: Ինչո՞ւ այո, և ինչո՞ւ՝ ոչ:
ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ ***Հայկական մանրանկարչության, խեցեգործության, ճարտարապետության նմուշներ:*** ***Խաչքար*** ***Խճանկար:***	• Ստանալ ծավալային պատկերներ: • Փորձարկել նյութերը և գործիքները: • Միավորել և առանձնացնել նյութերը: • Հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները: • Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: • Անվանել նյութերն ու	Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը: Հետազոտել տարբեր ժամանակներում արվեստագետների աշխատելու միջոցները և հնարավորությունները: Համեմատել տարբեր ստեղծագործություններ: Գտնել նմանություններ և տարբերություններ օգտագործված նյութերի կամ աշխատանքի միջոցների մեջ:

	գործիքները: • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները: • Վերլուծել արվեստի ստեղծագործություններն՝ ըստ տեսածի և զգացածի: • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները: • Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը:	Կազմակերպել քննարկումներ՝ - Ովքե՞ր են արվեստագետները: - Որտե՞ղ են ստեղծագործում: - Ի՞նչ գործիքներ են կիրառում: - Ի՞նչ ստեղծագործություններ են ստեղծում: - Որտե՞ղ կարելի է տեսնել ստեղծագործությունները, հարցերի շուրջ: Քննարկել տարբեր արվեստագետների աշխատանքներն ի՞նչ են պատմում իրենց ժամանակների մասին: Քննարկել, թե ինչպես, ինչով և ինչու են ստեղծագործում արվեստագետները: Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում:
ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ***Մ. Սարյան*** ***Հ. Հովնաթանյան,*** ***Վ. Սուրենյանց,*** ***Վան Գոգի, Սեզանի և Սարյանի,*** ***Խանջյանի նատյուրմորտների համեմատություն:***	• Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: • Անվանել նյութերն ու գործիքները: • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները: • Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: • Մեկնաբանել և վերլուծել՝ինչն է հավանում, ինչը՝ ոչ: • Ներկայացել կարծիք: • Խոսել արվեստի և ստեղծագործելու մասին: • Խմբավորել և մեկնաբանել ստեղծագործություններն ըստ տեսակների: • Տարբերել անցյալում և ներկայում ստեղծված աշխատանքները: • Ճանաչել, տարբերել և գնահատել հայկական	Դասակարգել ստեղծագործություններում հադիպող կերպարվեստի տարրերը և սկզբունքները (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես): Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում պատկերված ազգային ինքնություն արտահայտող առարկաները: Ուսումնասիրել ստեղծագործություններն ըստ ոճական առանձնահատկությունների: Որոշել ե՞րբ են ստեղծվել դրանք: Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը: Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: Տարբեր պատմական իրադար-

	արվեստը ներկայացնող աշխատանքները: • Բացատրել, թե ինչու է արվեստը ժամանակից դուրս:	ձություններ ներկայացնող ստեղ-ծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկա-յացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը: **Նկարագրել**- Ի՞նչ է պատկերված: **Վերլուծել**-Կերպարվեստի ո՞ր տարրերն են կիրառված: Ի՞նչ դեր են խաղում այդ տարրերը: **Մեկնաբանել** - Ի՞նչ է պատմում նկարիչը: Եթե ձայները փոխանցելու հնարավորություն լիներ, ի՞նչ ձայներ կլսվեին: **Քննարկել** - Ի՞նչ է պակասում նկարում: Եթե այո, ապա, ինչո՞ւ:
ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ***Ծննդյան տարեդարձ*** ***Ազգային տոն*** ***Եկեղեցական տոն*** ***Սուրբ Ծննդյան տոներ*** ***Գիտության օր*** ***Թարգմանչաց տոն***	• Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը: • Անվանել նյութերն ու գործիքները: • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները: • Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: • Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ: • Ներկայացնել կարծիք: • Ընտրել շրջապատող իրականությունը արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ: • Հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով: • Մեկնաբանել մշակութային հաստատություններում աշխատողների դերը և նշանակությունը: • Բացատրել, թե ինչու է արվեստը ժամանակից դուրս:	Հետազոտել մեր իրականության մեջ արվեստի ներկայությունը: Քննարկել արվեստի դերը: Ուսումնասիրել արվեստագետ-ների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և դրանց կարևորությունը: Ուսումնասիրել որևէ իրադար-ձություն՝ ընտանիքում, համայն-քում, երկրում, աշխարհում, որին անդրադարձել է արվեստը: Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ:

ԲԱԺԻՆ 5. Դասերի պլանավորման նմուշօրինակներ

Ներկայացված են դասի պլանավորման նմուշօրինակներ, որոնք կօգնեն կողմնորոշվելու վերջնարդյունքահեն դաս պլանավորելու համար:

Ստորև ներկայացնում ենք քայլաշար, որը կհուշի գործողությունների կատարման հաջորդականությունը՝

1. Առարկա
2. Դասարան
3. Թեմա
4. Նպատակ
5. Խնդիրներ
6. Վերջնարդյունքներ
7. Խաչվող հասկացություն
8. Միջառարկայական և ներառարկայական կապ
9. Անհրաժեշտ ռեսուրսներ
10. Դասի ընթացք
11. Հետադարձ կապ /ռեֆլեքսիա/

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված դասի պլաններն ընդամենը կարողունակությունների զարգացմանն ուղղված դասի պլաններ են: Դրանք կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով դասի տեսակը, նպատակը, սովորողների կարիքները և այլն:

Առարկա	**Կերպարվեստ**
Դասարան	**Երկրորդ**
Դասի թեման	**Նատյուրմորտ**
Դասի նպատակը	• Հարթության վրա առարկաները գրագետ տեղաբաշխելու կարողությունների ձևավորում: • Տարբեր նկարչական նյութերով աշխատելու կարողությունների ձևավորում:
Դասի խնդիրները	• Առարկաների պատկերում տարբեր նյութերով: • Պարզ երկրաչափական, բուսական կամ ազատ ձևերի միջոցով նատյուրմորտի կատարում:
Վերջնարդյունքները	• Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, պատկերի ծաղիկներ: (***S25***), (***S10***), (***S7***) • Կատարի ճեպանկարներ՝ բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: (***S30***) • Նկարագրի և բացատրի աշխատանքի ընթացքը:(***S7***) • Ցուցադրի գուաշով աշխատելու հմտություններ:(***S30***)

Խաչվող հասկացություն	Մասշտաբ, համամասնություն *Համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին կօգնի հասկանալ իր կատարած աշխատանքի ծավալը՝ հարկ եղած դեպքերում՝ համեմատություններ, վերլուծություններ կատարել*		
Անհրաժեշտ նյութեր և պարագաներ	*Ուսուցչի համար*	*Աշակերտի համար*	
	• Նատյուրմորտ համար պարզ կառուցվածք ունեցող առարկաներ, • Վերատպություններ, • Պաստառներ, • Գնահատման ռուբրիկներ	Նկարչական ալբոմ կամ A4 չափի թուղթ, Սև գրաֆիտե մատիտ, ռետին Գունավոր մատիտներ, Յուղամատիտներ, Թաղքագրիչ, Ջրաներկ (ուսուցչի հայեցողությամբ)	
Դասի ընթացքը	*Սկիզբ*	Աշխատանքի կատարման հաջորդականության, առարկաների պատկերման, համամասնություն-ների պահպանման առանձնահատկությունների ներկայացում	*10ր*
	Գործնական աշխ.	Պարզ առարկաներով նատյուրմորտի պատկերում	*20ր*
	Ամփոփում	Ավարտուն աշխատանքների դիտում, քննար-կում: Զրույց առարկաների պատկերման, թղթի մեջ տեղադրման, բնօրինակի և ավարտուն աշխատանքների համեմատության, մասշտաբի վերաբերյալ:	*5ր*
	Գնահատում	Ձևավորող գնահատում, ինքնագնահատման ռուբրիկների միջոցով:	*5ր*

Առարկա	**Կերպարվեստ**
Դասարան	**Երկրորդ**
Դասի թեման	**Բնանկար**
Դասի նպատակը	• Տարբեր նյութերով միևնույն բնանկարի պատկերման հմտությունների ձևավորում՝ յուղամատիտ, գունավոր մատիտներ, ջրաներկ: • Ճեպանկարի կատարման նախնական հմտությունների ձևավորում:
Դասի խնդիրները	• Ներկայացնել յուղամատիտների 4 տեսակները՝ չոր, յուղային, մոմե և ջրային: • Բնութագրել յումատիտի արտահայտչական հնարավորությունները՝ թավշյա մակերես, փայլուն բիծ, թափանցիկ հարթություն, շեշտադրված ծավալային գիծ և այլն: • Դրանցից յուրաքանչյուրի հետ աշխատելու առանձնահատկությունների և թղթի վրա փորձարկման աշխատանքների կազմակերպում: • Օժանդակել և ուղղորդել սովորողներին փորձարկած թղթերից ցանկացածը զարգացնելու գործընթացում:

Վերջնարդյունքները	• Կատարի առաջադրանքը՝ արտահայտելով վերաբերմունք: (***S25***) • Կատարի ճեպանկարներ՝ բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: (***S8, S10***) • Նկարագրի և բացատրի աշխատանքի ընթացքը:(***S7***) • Ցուցադրի գուաշով աշխատելու հմտություններ:(***S30***)		
Խաչվող հասկացություն	**Համակարգ և մոդել** *Համակարգը միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն է, որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն:* *Համակարգին հատուկ է որոշակի կայունություն և հարաբերական ինքնուրույնություն, որով հանդես է գալիս ավելի մեծ համակարգի շրջանակում՝ ենթահամակարգի կարգավիճակով:* **Կառուցվածք և գործառույթ** *Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ:*		
Անհրաժեշտ նյութեր և պարագաներ	*Ուսուցչի համար*	*Աշակերտի համար*	
	• Հայտնի ստեղծագործությունների վերատպություններ: • Բնանկարի մասին պատմող սահիկաշար, տեսաֆիլմ, առցանց նյութեր: • Նկարչական նյութերի նմուշներ: • Պաստառներ: • Դասը կարելի է անցկացնել բնության գրկում, հարկավոր է որոշել բնանկարի տեսակը՝ քաղաքային, գյուղական և այլն:	Նկարչական ալբոմ կամ A4 չափի տարբեր հաստության թղթեր, Սև գրաֆիտե մատիտ, ռետին Գունավոր մատիտներ, Յուղամատիտներ, Թաղքագրիչ, Ջրաներկ (ուսուցչի հայեցողությամբ)	
Դասի ընթացքը	*Սկիզբ*	Աշխատանքի կատարման հաջորդականության, առարկաների պատկերման, համամասնությունների պահպանման առանձնահատկությունների ներկայացում: Տարբեր նկարչական նյութերով ստեղծագործական աշխատանքի կատարման առանձնահատկությունների ցուցադրում:	*10ր*
	Գործնական աշխ.	Բնանկարի պատկերում տարբեր նկարչական նյութերի փորձարկման միջոցով: Ճեպանկարների կատարում:	*20ր*
	Ամփոփում	Ավարտուն աշխատանքների դիտում, քննարկում: Զրույց առարկաների պատկերման, թղթի մեջ տեղադրման, բնօրինակի և ավարտուն աշխատանքների համեմատության, նյութի հատ-	*5ր*

		կությունների և ստեղծագործական աշխատանքի բնույթի վերաբերյալ:	
	Գնահատում	Նյութի ուսումնասիրման և աշխատանքների կատարման ավարտին, աշխատանքները ներկայացվելու են ցուցադրության կամ պահվելու են թղթապանակում:	*5ր*

Առարկա	**Կերպարվեստ**	
Դասարան	**Երկրորդ**	
Դասի թեման	**Պատրաստվում ենք ցուցադրության**	
Դասի նպատակը	• Ստեղծագործական աշխատանքները վերանայելու, լրամշակելու և ցուցադրության պատրաստելու հմտությունների ձևավորում:	
Դասի խնդիրները	• Ծաղիկների պատկերում գուաշով: • Պարզ երկրաչափական, բուսական կամ ազատ ձևերի միջոցով նատյուրմորտի կատարում:	
Վերջնարդյունքները	• Տեսակավորել և խմբավորել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների: ***(S7)*** • Առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ, ***(S26)*** • Նկարագրել արվեստի ստեղծագործությունները, ***(S30)*** • Մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը:***(S8)***	
Խաչվող հասկացություն	**Պատճառ և հետևանք** Պատկեր և ազդեցություն կապը. ցուցադրության որակը տարբեր ընկալումներ է առաջացնում: **Անհատական և մշակութային արժեհամակարգ** Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ:	
Անհրաժեշտ նյութեր և պարագաներ	*Ուսուցչի համար*	*Աշակերտի համար*
	Ուսումնական գործընթացի մինչ այս պահը կատարած աշխատանքների հետ կապված նյութեր: Թեմատիկ պլանավորում: Ցուցադրության համար անհրաժեշտ նյութեր, նշումներ:	Աշխատանքային տետր Ավարտուն աշխատանքներով թղթապանակ

Դասի ընթացքը	*Սկիզբ*	Աշխատանքների կազմակերպում, անելիքների նախանշում	*10ր*
	Գործնական աշխ.	Դպրոցական ցուցադրության նախապատրաստական աշխատանքներ: Նախկինում արված աշխատանքների վերանայում, լրամշակում:	*10ր*

	Ամփոփում	Ավարտուն աշխատանքների դիտում, քննարկում: Զրույց առարկաների ցուցադրության կազմակերպման, աշխատանքները ներկայացնելու տարբերակների վերաբերյալ	*15ր*
	Գնահատում	Ձևավորող գնատահում: Ավարտուն աշխատանքների ընտրություն ցուցադրության համար:	*5ր*

ԲԱԺԻՆ 6.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ‹‹Կրթության մասին›› ՀՀ օրենք:
2. ‹‹Հանրակրության մասին›› ՀՀ օրենք:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, ՀՀ կառավարության նիստի N 33 արձանագրային որոշում, 26.08.2004:
4. ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշում:
5. ‹‹Հանրակրթության պետական չափորոշիչ››, 2010:
6. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում: Հանրակրթության պետական չափորոշիչ
7. COMPETENCES FOR DEMOCRATIC CULTURE (CDC), ձեռնարկ, ԵԽ, 2018:
8. ՅՈՒՆԵՍԿՕ, «Կրթություն հանուն կայուն զարգացման» ծրագիր:
9. Ազարյան Լ. Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975:
10. Աղասյան Ա. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում. Եր., 2009:
11. Աղասյան Ա. Քաջազի մշտավառ կանթեղը: (Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության), Եր., 2009 :
12. Աղասյան Ա. Երվանդ Քոչարի տարածության մեջ, Եր., 2013:
13. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. Հայ արվեստի պատմություն, Եր., «Զանգակ-97» հրատ., 2009, 576 էջ:
14. Ակնարկ հայ երաժշտության պատմության, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1963:
15. Բալյան Ա. Դպրոցականների գեղագիտական դաստիարակություն: Եր., «Լույս», 1979:
16. Բորև Յու., Գեղագիտություն, Եր., «Հայաստան», 1982:
17. Բրուտյան Ց. Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու (Արվեստագիտություն): Եր., 1974:
18. Բրուտյան Ց. Սփյուռքահայ երաժշտական մշակույթը: Եր., «Սովետական գրող», 1982:
19. Գեղագիտական դաստիարակություն: Եր., «Լույս», 1975:
20. Գևորգյան Ա. Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Եր., 1978:
21. Դավթյան Ս. Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության: Եր., 1981:
22. Դրուսկին Մ., Արտասահմանյան երաժշտության պատմություն, Մոսկվա, 1976:
23. Երկանյան Վ., Հայկական մշակույթ: Եր., 1982:
24. Թաթիկյան Վ. Արցախի տոհմագորգերը, Եր., 2004:
25. Թահմիզյան Ն., Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում: Եր., «Սովետական գրող», 1982:
26. Իգիթյան Հ. Հովնաթանյանից մինչև Մինաս: Եր., 2001:
27. Լուկին Յու. Էսթետիկայի հիմունքներ: Եր., «Լույս», 1984:
28. Խալաթյան Լ. Բեմանկարչություն: Հայ սովետական թատրոնի պատմություն, Եր., 1967:
29. Խանջյան Ա. Երևանի արձանները, Եր., 2004:
30. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Եր., 2005:
31. Խաչատրյան Շ. Ֆրանսահայ կերպարվեստ, Եր., 1991:
32. Հակոբյան Հ. Վասպուրականի մանրանկարչությունը, Գիրք 1-2, Ե.,1976-1982:

33. Հ. Հովհաննիսյան. Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978:
34. Ղազարյան Մ., Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, Եր., 1990:
35. Նավոյան Մ. Դրվագներ հայ երաժշտության պատմության: Եր., «Զանգակ-97», 2009:
36. Ֆոր Էլի. Արվեստի պատմություն, I, II, III: Եր., «Սարգիս Խաչենց», «Փրիթինֆո», 2000-2007-2008:
37. Авсиян О.А. Натура и рисование по представлению. М.: Изобразительное искусство, 1985. 151 с..
38. Алексеев П.К., Короткова А.Л., Трофимов В.А., Основы изобразительной грамоты. СПб: НИУ ИТМО, 2011. 70 с..
39. Вёльфлин Г. Основные понятия истории искусств. Изд. В. Шевчук, 2013. 330 с..
40. Виппер Б. Введение в историческое изучение искусства. Изд. В. Шевчук, 2010. 368 с..
41. "Искусство в школе". Обшественно-педагогический и научно-методический журнал, Москва, 2010 г..
42. Рисунок, основы учебного академического рисунка, учебник, Ли Н.Г., 2007.
43. Штелер Т. Обратная перспектива: Павел Флоренский и Морис Мерло-Понти о пространстве и линейной перспективе в искусстве Ренессанса//.Историко-философский ежегодник 2006.Ин-т философии.РАН. — М.: Наука, 2006, с. 320—329.
44. Next Generation Sciense Standarts, https://www.nextgenscience.org.
45. COMPETENCES FOR DEMOCRATIC CULTURE (CDC), ձեռնարկ: ԵԽ, 2018:
46. National Core Arts Standards: A Conceptual Framework for Arts Learning.
47. Julia G. Thompson. The First-Year Teacher's Survival Guide, 3rd Edition.John Wiley & Sons, 2013. 562p..
48. Discipline-based art education: a curriculum sampler, Kay Alexander, Michael Day, 1991.
49. Achievement Objectives by Learning Area. Set of 8 charts. Published for the Ministry of Education, Wellington, New Zealand. 2007.
50. The College Board, Arts Education Standards and 21st Century Skills: An analysis of the National Standards for Arts Education as compared to the 21st Century Skills Map for the Arts, New York, N.Y., 2011.406p.
51. Office of Superintendent of Public Instruction. Washington State K–12. Arts Learning Standards for Visual Arts. Learning and Teaching. 2017. 186p.
52. Raul M. Sunico, Ph.D. Evelyn F. Cabanban Melissa Y. Moran, Music and Arts Appreciation for Young Filipinos, Department of Education Republic of the Philippines, 2015. 334p.
53. Rosehill School. Art & Design and D&T Policy,
54. Design and technology programmes of study: key stages 1 and 2, National curriculum in England,
55. Washington State K–12 Arts Learning Standards for Visual Arts,
56. Massachusetts Arts Curriculum Framework

A Framework for K-12 Science Education: Practices, Crosscutting Concepts and Core Ideas,

57. Massachusetts Science and Technology/Engineering, Curriculum Framework,
58. California Common Core State Standards,
59. Elementary STEM Education: The Future for Technology and Engineering Education,
60. Advancing Excellence in Technological Literacy,
61. Ontario Schools, Kindergarten to Grade 12: Policy and Program Requirements,

62. K–10 Curriculum Framework and Statement of Equity Principles and the Melbourne Declaration on Educational Goals for Young Australians,
63. NSW Syllabus for the Australian Curriculum,
64. Board of Studies NSW in its K–10 Curriculum Framewor,

Էլեկտրոնային կայքեր

65. https://artclasscurator.com/art-criticism-steps
66. https://globalartsandhumanities.osu.edu/about/cross-disciplinary-research
67. https://www.educatorstechnology.com/
68. https://www.nationalartsstandards.org/
69. ttps://www.incredibleart.org/
70. http://artsedge.kennedy-center.org/educators/standards
71. https://www.theartof.com/training
72. https://www.curriculumonline.ie/Home
73. https://www.nga.gov/education/learningresources.html
74. https://www.pltw.org/our-programs/pltw-gateway-curriculum
75. https://www.wabisabilearning.com/blog/20-blooms-taxonomy-infographics
76. https://www.k12.wa.us/student-success/resources-subject-area
77. https://www.stem.org.uk/resources#design-technology
78. https://curriculum.gov.mt/en/Curriculum/Year-1-to-6/Pages/default.aspx
79. https://www.wabisabilearning.com/case-study
80. https://www.thelearningweb.net/music-learning.html
81. https://www.slideshare.net/mrsnazlan/a-curriculum-framework-for-art-education
82. https://www.nga.gov/education/teens.html
83. https://www.theartof.com/training,
84. https://www.curriculumonline.ie/Home,
85. https://www.nga.gov/education/learningresources.html,
86. https://www.pltw.org/our-programs/pltw-gateway-curriculum ,
87. https://www.wabisabilearning.com/blog/20-blooms-taxonomy-infographics ,
88. https://www.k12.wa.us/student-success/resources-subject-area,
89. https://www.stem.org.uk/resources#design-technology,
90. https://curriculum.gov.mt/en/Curriculum/Year-1-to-6/Pages/default.aspx,
91. https://www.wabisabilearning.com/case-study,
92. https://www.thelearningweb.net/music-learning.htm,
93. https://www.slideshare.net/mrsnazlan/a-curriculum-framework-for-art-education
94. https://artfulhaven.com/art-tools-and-materials-for-drawing-and-painting/
95. https://www.fabercastell.com/blogs/creativity-for-life/graphite-pencil-lead-degree-hardness#:~:text=Graphite%20pencils%20are%20classified%20as,number%20the%20higher%20the%20intensity.
96. https://www.art-is-fun.com/artists-supplies
97. https://www.britannica.com/list/art-history-the-origins-of-7-of-your-favorite-art-supplies
98. https://www.hobbycraft.co.uk/art-supplies/

99. https://www.reference.com/world-view/art-important-people-12eb5c27357e6acc?utm_content=params%3Ao%3D740005%26ad%3DdirN%26qo%3DserpIndex&ueid=e57aadda-fe24-444b-ad69-ae788171a6de
100. https://allisonjoneshunt.com/2021/08/16/my-favorite-art-supplies-for-intuitive-abstract-painting/
101. https://www.annelafolletteart.com/blog/2019/11/05/12-art-supplies
102. https://www.artworkarchive.com/blog/do-you-need-expensive-art-supplies-to-make-good-art
103. https://www.paintartthatsells.com/7-art-supplies-every-artist-should-have/
104. https://lovefunart.ca/blogs/insight/what-are-the-art-supplies-you-need-as-beginners
105. https://www.trekell.com/blogs/experience/professional-art-supplies
106. https://www.pinotspalette.com/naperville/blog/creative-life/pinotspalettenaperville-what-is-the-origin-of-art-supplies
107. https://www.lifewire.com/create-contrast-with-obvious-differences-1077469
108. http://web.archive.org/web/20090301054355/http://mms.d321.k12.id.us/webart/html/student%20work/main.html
109. Middle School Art Lesson Plans (archive.org)
110. https://www.culturepartnership.eu/
111. https://hinunor.wordpress.com/tag/%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/
112. https://www.incredibleart.org/files/search.html?cx=partner-pub-6606350984518890%3A4938157224&cof=FORID%3A10&ie=ISO-8859-1&q=golden+ratio&sa=Search+IAD
113. https://www.tripimprover.com/blog/the-return-of-the-prodigal-son-by-rembrandt
114. https://www.portraitflip.com/blog/famous-abstract-paintings/
115. https://human.libretexts.org/Bookshelves/Art/Book%3A_Introduction_to_Art_-_Design_Context_and_Meaning_(Sachant_et_al.)/04%3A_Describing_Art/4.02%3A_FORMAL_OR_CRITICAL_ANALYSIS

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

2–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

Հրատարաչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/8
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 8,5 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ
9 789939 990606
ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.zangak.am www.book.am